هویس دوهفته نامه اجتماعی - فرهنگی
شماره ۶۶، ۲۳ دی ۱۳۸۸ قیمت ۹۰۰ تومان

Յույս

թիվ 66
Մշակութային եւ Հասարակական
Երկշաբաթաթերթ
Յունուար 13, 2009, 900 բուման
Հայաստանում 380 դրամ



ԱՇԽԱՐՀԸ 2000-ԱԿԱՆՆԵՐՈՒՄ

Յոյս
Մշակութային եւ Հասարակական
Երկշաբաթաթերթ
Գ տարի, թիւ66, 3ուևսար 13, 2009,
900 թուման
Հայաստանում 380 դրամ

ԳԼԽԱՒՈՐ ՆԻԹ

4 **Աշխարհը 2000-ականներին**
Ռ.Ս.

10 տարի սրանից առաջ, 1999-ի Դեկտեմբերին, երբ աշխարհը մուտք էր գործում երրորդ հազարամեակ, ո՞վ գիտէր, ի՞նչ էր լինելու աշխարհի վիճակը այսօր:

Այս Համարում

2 **Համայնք**

10 **Հայաստան՝ Մշակոյթ 2009**
Կարինէ Իւնէսեան

12 **Սրբազան հօր հետ «Յոյս»-ի հարցազրոյցի արձագանք**
Վարդան Հախվերդեան

13 **«Ազգ»-ը «Յոյս»-ի մասին**
Ինգա Պետրոսեան

14 **Հէյ դու ջահէլ ... թեհրանահայութիւն**
Շաքէ Ա. Պետրոսեան

17 **Ապագայապաշտութեան 100-ամեակը**
Գրիգոր Պըլտեան

21 **Թեհլիրեանը նկարագրում է Թալէաթի սպանութիւնը**

24 **«Քառ ու բանք» գրքի մասին**
Ժ. Ալավերդեան

26 **Վիկտոր Խարա՝ վերածնւող լեգենդը**

27 **Փորձիր ինքդ քեզ**

28 **Դէմքի աննախընթաց վիրաբուժութիւն**

31 **Համով- հոտով դափամայ**

32 **Մարզանք**

36 **Ժամանց**

Յոյս
Հասարակական-մշակութային
երկշաբաթաթերթ

Արտօնատէր՝
Լեւոն Ահարոնեան

Խմբագիր՝
Ռոբերթ Սաֆարեան

Խմբագրական կազմ՝
Քարմէն Ազարեան,
Լիա Խաչիկեան,
Անդրանիկ Խեչումեան,
Գարուն Սարգսեան,
Անդրանիկ Սիմոնեան,
Կոլիա Տէր Յովհաննիսեան,
Վանէ Տէր Պետրոսեան

Գեղարուեստական ձեւաւորում՝
Լիա Խաչիկեան

Սրբագրիչ՝
Քարմէն Ազարեան

Գովազդ՝
Ա. Ազարեան

Հասցէ՝
Թեհրան, էնղելաբ պողոտայ,
Վալի Ասր քառուղի
համար 1048

Հեռախօս՝
66495180
66492693
Հեռախօս-հեռապատճէն՝
66495208
էլեկտրոնային փոստ՝
hooys@inbox.com
համացանցային կայք՝
www.hooys.com

ՄԵՐ ՕՐԱՑՈՅՑՆԵՐԸ

«Րաֆֆի» օրացոյցը՝ 69 տարեկան, «Կանթեղ»-ը՝ 50 տարեկան

Իրանահայկական օրացոյցները համայնքի աւանդական — եւ շահաւէտ — հրատարակութիւններից են, որոնք կարեւոր տեղ են գրաւում նաեւ մեր մշակութային ճաշակը ձեւաւորելու գործում: Նրանք լինելով հայկական-պարսկական, այսինքն ներառելով թէ՛ հայկական եւ թէ՛ ընդհանուր իրանական տօներն ու ոչ-աշխատանքնային օրերը, իւրաքանչիւր հայ ընտանիքի համար անհրաժեշտ են եւ խիստ գործածական: Դրանից բացի, այդ օրացոյցների էջերում արձանագրւում են իրանահայ համայնքի անցեալ տարւայ յիշարժան դէպքերը, որոնց հաւաքածուն կարող է ծառայել որպէս իրանահայութեան պատմութեան հաւաստի մի աղբիւր: Մեր անցեալ համարում ներկայացրինք «Նայիրի» օրացոյցը. այս ընթացքում ստացանք նաեւ «Կանթեղ» եւ «Րաֆֆի» օրացոյցները, որի համար շնորհակալութիւն ենք յայտնում յարգարժան հրատարակիչներին:

«Րաֆֆի» օրացոյցը հիմնադրւել է սրանից 69 տարի առաջ՝ Տաճատ Պօղոսեանի միջոցով: Այժմ այն հրատարակւում է հրատարակչական կազմի կողմից: Այս տարւայ օրացոյցի էջերը զարդարւած են Ռոբերտ Շահբազեանի լուսանկարներով:

«Կանթեղ»-ը այս տարի բոլորում է իր 50 տարին: Այն հիմնադրւել եւ տարիներ հրատարակւել է Յովհաննէս Տէր Պետրոսեանի միջոցով, իսկ այժմ հրատարակւում է «Ալիք» հաստատութեան կողմից: Այս տարւայ «Կանթեղ»-ը կազմել է Արա Յ. Աւանէսեանը: Օրացոյցի Գրաֆիկ ձեւաւորումը կատարել է Արգիւէ Շահբազեանը, իսկ լուսանկարները Ռաֆիկ Արզումանեանի (նաեւ՝ Հրայր Բազէյի, Քաջունի Արզումանեանի եւ Սեւան Մուսախանեանի) գործերն են:

مسئول محترم نشریه هویس

با سلام و احترام

میلاد پیامبر صلح و دوستی، حضرت عیسی مسیح و آغاز سال ۲۰۱۰ میلادی را به جنابعالی و همهٔ هموطنان عزیز ارمنی تبریک و تهنیت عرض می‌نمایم.
از پروردگار متعال سالی خوش، پر برکت و سرشار از توفیق و بهروزی برای همگان خواستارم.

محمد رضا وصفی
مدیر کل مجامع و تشکلها و فعالیتهای فرهنگی

مسئول محترم نشریه هویس

با سلام

میلاد فرخنده و مبارک پیام آور رحمت و محبت، مبشر ایمان و معنویت حضرت عیسی بن مریم (ع) و آغاز سال جدید میلادی را به تمامی یکتاپرستان و مسیحیان به ویژه هموطنان عزیز ارمنی در سراسر کشور تبریک و شادباش عرض می‌نمایم.
امید است با عنایت حق تعالی، سالی سرشار از موفقیت و بهروزی برای تمام هم میهنان، خصوصاً جامعه ایرانیان ارمنی، در پیش داشته باشیم.

سعید تقوی
مسئول اداره امور اقلیتهای دینی

«ՍԱՀԱԿԵԱՆ» ԴՊՐՈՅԻ ԱՇԱԿԵՐՏՈՒԹԵԱՆ ՁԵՌՔ ԲԵՐԱԾ ՅԱՋՈՂՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԳԻՏԱԿԱՆ ՕԼԻՄՊԻԱԴԱՆԵՐՈՒՄ

Հայոց ազգային ոչ-շահադիտական «Սահակեան» դպրոցի հանրային կապը հետեւեալ հաղորդագրութեամբ յայտարարել է դպրոցի աշակերտութեան ձեռք բերած յաջողութիւնների մասին:

«Սոյն թւականի Դեկտ. 11-ին (Ազարի 20) տեղի ունեցաւ գիտական օլիմպիադա նախաձեռնութեամբ «Թարբիաթէ մոդառէս» համալսարանի՝ երկրի ընդհանուր ուղեցոյց եւ միջնակարգ դպրոցների աշակերտութեան մասնակցութեամբ: Նշւած օլիմպիադային մասնակցեցին նաեւ դպրոցիս ուղեցոյց եւ միջնակարգ օղակների մի շարք աշակերտներ, որոնցից 19-ը յաջողեցին նւաճել աչքառու յաջողութիւններ: Ուրախութեամբ եւ պարծանքով յայտնենք, որ դպրոցիս միջնակարգ օղակի ուսողականի երկրորդ դասարանի աշակերտ Արին Աղախանեանը ընդհանուր միջնակարգ օղակների երկրորդ դասարանցիների միջեւ երկրի մակարդակում, Ֆիզիկայի օլիմպիադայում գրաւել է առաջին տեղը, որը իրապէս արժանի է բարձր գնահատանքի: Հարկ է նշել, որ վերոյիշեալ օլիմպիադաների արդիւնքը եւ փոխադրւած աշակերտութեան անւանացանկը տպագրւել է «Աֆարիներ» օրաթերթի 3490-րդ համարում, սոյն թւականի Դեկտեմբերի 20-ին (Ազարի 29): Ստորեւ Ձեզ ենք ներկայացնում դպրոցիս յաջողակ աշակերտութեան անւանացանկը: Ուղեցոյց օղակ -Ա դասարան՝ Մայքըլ Թորոսեան - գիտութիւն եւ մաթեմատիկա, Շարա Շահբազեան - գիտութիւն եւ մաթեմատիկա, Էմանուէլ Մեհրաբի - գիտութիւն եւ մաթեմատիկա: Բ դասարան՝ Փանուէլ Դաւթեան - գիտութիւն եւ մաթեմատիկա, Արէն Սարգսեան - գիտութիւն եւ մաթեմատիկա, Դերիկ Կարապետեան - գիտութիւն եւ մաթեմատիկա, Մենուա Մաթեան - գիտութիւն եւ մաթեմատիկա: Գ դասարան՝ Վարագ Աբրահամեան - գիտութիւն եւ մաթեմատիկա, Արգամ Արիստակէսեանց - գիտութիւն եւ մաթեմատիկա, Արամէ Նորվան-Պօղոսեան - գիտութիւն եւ մաթեմատիկա, Դիոն Յակոբեան - գիտութիւն եւ մաթեմատիկա: Միջնակարգ օղակ- Առաջին դասարան՝ Ռոնի Բաղդասրաեան - մաթեմատիկա, Վարուժան Տէր Աբրահամեանց - քիմիա, Առնօ Ռոստամլու - մաթեմատիկա: Ուսողականի Բ դասարան՝ Արին Աղախանեան - մաթեմատիկա եւ ֆիզիկա, Մաթիօ Բզիկ - մաթեմատիկա, Ռենէ Սինանի - մաթեմատիկա եւ ֆիզիկա: Ուսողականի Գ դասարան՝ Արբի Զարգարեան - մաթեմատիկա եւ ֆիզիկա, Արգին Ղարիբեան - մաթեմատիկա եւ ֆիզիկա:

Այսպիսով, դպրոցիս տեսչութեան, ուսուցչական կազմի եւ ծնողական խորհրդի կողմից մեր ջերմագին շնորհաւորանքի եւ քաջալերանքի խօսքերն ենք ուղղում դպրոցիս աշակերտութեանը նւաճած յաջողութիւնների համար»:

ՀՈՎՄԱՅԻՆ ԷԼԵԿՏՐԱԿԱՅԱՆ

ՀՀՇՄ-ի տեղեկատու-նամակի նոր համարից

Ստացել ենք «Հայ Ճարտարապետների եւ Ճարտարագէտների Միութեան» տեղեկագրի նոր համարը, որում տեղ են գտել միութեան աշխատանքների լուրերը եւ այլ հետաքրքիր նիւթեր: Ստորեւ մէջբերում ենք ճարտարագէտ Աբրահամ Այւազեանի դասախօսութեան զեկոյցը հողմային էլեկտրակայանների մասին.

«Իրանում հողմային էլեկտրակայաններ տեղադրել են Մանջիլ քաղաքի մօտակայքում, ուր յաճախ ուժգին քամիներ են փչում: Ի՞նչ գիտենք դրանց մասին եւ որքա՞ն ստոյգ են մեր տեղեկութիւնները: Ահա այդ նիւթն էր դարձել Նոյ. 12-ի դասախօսական երեկոյի թեման, որը ներկայացնում էր միութեանս նախագահ. Աբրահամ Այւազեանը: Դասախօսութիւնը կազմակերպւել էր Հ.Ճ.Ճ.Մ.-ի եւ Հ.Հ.Ը.Մ.-ի համագործակցութեամբ՝ միութեանս կենտրոնատեղիում: Սրահի անկիւնում կանգնած էր հողմային էլեկտրակայանի մանրակերտը՝ մակետը, որի վրայ գրւած էր «KAMI 3000+»:

Դասախօսը լուսապատկերների շարանով հողմաէլեկտրակայաններ մասին մի շարք տեղեկութիւններ հաղորդեց, ապա անդրադարձաւ Մանջիլում տեղադրւած հողմային էլեկտրակայաններին, որոնց մէջ է գտնւում նաեւ «Քամի 600» մակնիշը: Այս էլեկտրակայանը միակն է, որ նախագծւել ու արտադրւել է Իրանում՝ 600 կիլովատժամ (կվժ/kwh) հզօրութեամբ: «Քամի 600» էլեկտրակայանը արտադրել է «Այւազեան» ընկերութիւնը, որը ներկայում աշխատում է 3000 կվժ հզօրութիւն ունեցող էլեկտրակայանի վրայ: Ստորեւ տրւում են «Քամի 600» էլեկտրակայանի մասին մի քանի տւեալներ.

-Էլեկտրակայանի աշտարակի բարձրութիւնը գետնի մակերեսից՝ 45 մետր

-Պտուտակի տրամագիծը (դիամետր)՝ 41 մետր

-Պտուտակի առաւելագոյն արագութիւնը թեւերի ծայրամասում՝ 75 մետր/վայրկեան

-Տարեկան արտադրութիւն (միջին) 2000 MWhr

Շուրջ մէկ ժամ տեւած դասախօսութիւնը մեծ հետաքրքրութիւն առաջացրեց ներկաների մօտ, որոնք բազմաթիւ հարցումներով փորձում էին յաւելեալ տեղեկութիւններ ստանալ նիւթի վերաբերեալ: Վերջում համեստ ընդունելութեամբ հիւրասիրւեցին ներկաները»:

Ա Շ Խ Ա Ր Հ Ը

10 տարի սրանից առաջ, 1999-ի Դեկտեմբերին, երբ աշխարհը մուտք էր գործում երրորդ հազարամեակ, ո՞վ գիտէր, թէ ինչ էր լինելու աշխարհի վիճակն այսօր: Ռ. Ս.

ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ԱՄԵՆԱՄԵԾ ԱՀԱԲԵԿՉԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆԸ

Պատմական ճո՞ր շրջան

2001 թւականի Սեպտեմբերի 11-ին պատմութեան ամենամեծ ահաբեկչական գործողութեամբ, երկու օդանաւեր բախուեցին Նիու-Եորքի միջազգային առեւտրի երկուրեակ աշտարակներին՝ հողին հաւասարեցնելով նրանց, խլելով աւելի քան 2800 մարդկային կեանք: Սեպտեմբեր 11-ը պատրւակ հանդիսացաւ ամերիկեան աշխարհակալութեան մի նոր շրջանի համար, որը կոչուեց ահաբեկչութեան դէմ պայքարի շրջան: «Ահաբեկչութիւնը» փոխարինեց «կոմունիզմ»-ին, որպէս արեւմուտքին սպառնացող մեծ վտանգ, եւ այդ պատճառաբանութեամբ Ամերիկեան եւ Նատոյի ուժերը նախ գրաւեցին Իրաքը, որը համարեա ոչ մի կապ չունէր Սեպտեմբերի 11-ի ահաբեկչութեան հետ, ապա եւ Աֆղանստանը: Սակայն մինչ օրս, չի ձերբակալուել Օսամա Բեն Լադենը՝ «Ալ Քայիդա» կազմակերպութեան ղեկավարը, որը պաշտօնապէս յանձն է առել Նիու-Եորքի երկուրեակ բուրգերի պայթեցման պատասխանատուութիւնը:■

2000-ԱԿԱՆՆԵՐԻՆ

ՍԱԴԴԱՄԻ ԲՌՆԱՊԵՏՈՒԹԵԱՆ ԿՈՐՃԱՆՈՒՄ

Իրաքի Քուրդստանը դը ֆակտօ անկախ է

10 տարի սրանից առաջ Իրաքում իշխում էր, աշխարհի ամենաբըռնակալ ղեկավարներից մէկը՝ Սադդամ Հուսէյն Թաքրիթին: Նա իր իշխանութիւնը պահպանելու նպատակով ոչ մի բանի առջեւ կանգ չէր առնում, նոյնիսկ, երբ նրա փեսաները ապաստանեցին Յորդանան, ուր եւ քննադատեցին նրան, նա խոստացաւ նրանց, Իրաք վերադառնալու դէպքում չպատժել, սակայն Բաղդադ հասնելուն պէս, անմիջապէս գնդակահարեց նրանց: Սադդամը յարձակուեց Իրանի, յետոյ Քուվէյթի վրայ, եւ քիմիական ռմբակոծութեան ենթարկեց իրաքեան Քուրդստանի Հալաբչէ քաղաքը, որի հետեւանքով զոհուեցին հազարաւոր անմեղ մարդիկ, յատկապէս կանայք եւ երեխաներ: 2003 թւականի Մարտի 20-ին, ամերիկեան եւ Նատոյի զինեալ ուժերը ծաւալուն յարձակում շղթայազերծեցին Իրաքի դէմ, եւ երկու շաբաթւայ ընթացքում գրաւեցին Բաղդադը: Այս յարձակման դրդապատճառը, իբր Իրաքի զանգուածային սպանութեան զէնքերն էին, որոնք հէնց այդպէս էլ չյայտնաբերուեցին հետագայ տարիների մանրազնին խուզարկումների ընթացքում: 2006 թւականի Դեկտեմբերի 30-ին կախաղան բարձրացուեց Սադդամը. Իրաքը փրկուեց նրա դիկտատուրայից, սակայն մինչ օրս չունի կայացած կառավարութիւն եւ հարիւրաւոր մարդիկ զոհ են գնում միջ-դաւանանքային պայթիւնների: Վերջին վիճակագրութիւնների համաձայն, Իրաքի գրաւման ընթացքում սպանուել են 4000-ից աւելի ամերիկեան զինուորներ, այն ինչ 100 հազարից աւելի իրաքցիներ զոհուել են ամերիկեան զինեալ գործողութիւնների ընթացքում կամ ահաբեկչական պայթիւնների հետեւանքով:

Իրաքի Քուրդստանը դը ֆակտօ անկախ է, եւ Իրաքի ինքնավարութեան շարժման վաղեմի ղեկավար Ջալալ Թալեբանին Իրաքի նախագահն է:■

ԹԱԼԻԲՆԵՐԻ ՌԵԺԻՄԻ ՏԱՊԱԼՈՒՄԸ ԱՖՂԱՆՍՏԱՆՈՒՄ

Բեն Լադենը դեռ չի ձերբակալւել

10 տարի առաջ, Աֆղանստանում իշխում էր «թալիբներ» կոչւող ծայրայեղական իսլամական խըմբակցութիւնը: Նրանց իշխանութեան ներքոյ կանայք իրաւունք չունէին առանց *բուրքայի* փողոց դուրս գալ. չէր թոյլատրւում աղջիկներին ուսում ստանալ դպրոցներում եւ համալսարաններում: 2001 թւականի Հոկտեմբերի 7-ին ամերիկեան ուժերը սկսեցին ռըմբակոծել Աֆղանստանը, Նոյեմբերի 12-ին գրաւեցին Կաբուլը, որտեղից դուրս քշեցին թալիբներին: 2004 թւականի Հոկտեմբերի 9-ին կայացած ընտրութիւնների արդիւնքում նախագահ ընտրւեց ամերիկամէտ Համեդ Քարզայը, որը վերընտրւեց այս տարի: Սակայն թալիբները շարունակում են գոյատեւել երկրի զանազան շըրջաններում, նաեւ Պակիստանում, եւ օր-օրի ուժեղանում, հաւանաբար, Պակիստանի անվտանգութեան կազմակերպութիւնների հովանաւորութեամբ:■

ԵՐԿՐԱԳՆԴԻ ՏԱՔԱՑՈՒՄ

Արձանագրած ամենատաք տասնամեակը

2000-ականներին երկիր մոլորակը առաւել քան երբեւէ տաքացաւ եւ այսօր նոյնպէս շարունակում է տաքանալ: Դրա պատճառը մեծ քանակութեամբ CO^2 գազի արտադրութիւնն ու արտանետումն է դէպի մթնոլորտ, որի պատճառով տեղ-տեղ բացւել է օզոնի շերտը, որի համար պատասխանատու են առաջին հերթին աշխարհի զարգացած արդիւնաբերական երկրները: Համաշխարհային մետերլոգիական կազմակերպութեան յայտարարութեան համաձայն, 2000-2009 տասնամեակը երկրագնդի արձանագրած ամենատաք տասնամեակն է եղել (օդի ջերմաստիճանի չափումն ու արձանագրումը սկսւել է 1850-ականներից): 2009 թւականին կայացաւ Կոպենհագենի միջազգային համաժողովը, ուր յոյս կար աշխարհի գերմեծերը համաձայնութեան կը գան իւրաքանչիւրն իր դերը կատարելու երկրագունդը փրկելու համար, որն իհարկէ նշանակում է ներդրում կատարել եւ միեւնոյն ժամանակ թոյլ տալ միջազգային հսկիչներին՝ ստուգելու իւրաքանչիւր երկրի յանձնառութիւնների կատարումը: Ակնկալւող համաձայնութիւնը, ցաւօք, չստացւեց, յատկապէս Չինաստանի հետ, որը միջազգային վերահսկողութիւնը համարում է իր ազգային իշխանութեան խախտում:■

ԱՄՆ-Ի ԱՌԱՋԻՆ ՍԵԻԱՄՈՐԹ ՆԱԽԱԳԱՀԸ

Օբաման դժւարանում է իրականացնել իր խոստումները

2008 թւականի Նոյեմբերի 4-ին ԱՄՆ-ի նախագահ ընտրւեց Դեմոկրատ կուսակցութեան թեկնածու Բարակ Օբաման. Նա Ամերիկայի առաջին սեւամորթ նախագահն է, որը մեծացել է գաղթական ընտանիքում: Նրա ընտրւելը մեծ խանդավառութիւն ստեղծեց թէ՛ ամերիկացի միջին ու ցածր խաւերի մէջ, եւ թէ՛ միջազգային մասշտաբով: Օբամայի ընտրութիւնը վերականգնեց Ամերիկայի միջազգային վարկը, որը Ջորջ Բուշի 8-ամեայ նախագահութեան օրօք, նրա պատերազմական եւ աշխարհակալական քաղաքականութիւնների հետեւանքով մեծ անկում էր ապրել: Օբաման դժւարանում է իրականացնել իր խոստումները. Գուանթանամոյի բանտը դեռ գործում է, եւ նա նոր ուժեր է ուղարկել Աֆղանստան, իսկ միեւնոյն ժամանակ նա ստացել է խաղաղութեան Նոբելեան մրցանակը: Օբաման 2009 թւականի Յունիսին Կահիրէի համալսարանում արտասանած իր ելոյթի ընթացքում ողջունեց իսլամական աշխարհին, յայտարարելով, որ Ամերիկան երբեւէ չի ցանկանում պատերազմել իսլամի դէմ:■

ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՃԳՆԱԺԱՄ

Չինաստանը՝ տնտեսական նոր հսկայ

2007-ի վերջին ամիսներից աշխարհը օր-օրի աւելի է մխրճւել ֆինանսական եւ տնտեսական ճգնաժամի մէջ, որի հետեւանքով անգործութիւնը եւ արդիւնաբերական մեծ տնտեսութիւնների բացասական աճը դարձել է աշխարհի առաջին խնդիրը:

2000-ականների ընթացքում շարունակւել է Հնդկաստանի եւ յատկապէս Չինաստանի տնտեսական աճը: Չինական սպառողական ապրանքներով են լցւում աշխարհի շուկաները:■

ԱՒԵՐԻՉ ԵՐԿՐԱՇԱՐԺՆԵՐ ՈՒ ՓՈԹՈՐԻԿՆԵՐ

Համաշխարհային համաճարակներ

2004 թւականի Դեկտեմբերի 26-ին Հնդկական ովկիանոսում տեղի ունեցած երկրաշարժի պատճառով առաջացած Ցունամին, հարաւ-արեւելեան Ասիայում (Մալայզիա, Ինդոնեզիա, եւ այլն) խլեց 150000 մարդ-

կային կեանք: Դա պատմութեան ընթացքում արձանագրուած ամենաուժգին ցունամին էր, եւ հինգերորդ ամենադաժան բնական աղէտը: Չինաստանի Սիչուանի (2008), Իրանի Բամի (2003) եւ Քաշմիրի (2005) երկրաշարժերին եւս զոհ գնացին տասնեակ հազարաւոր մարդիկ:

2005 թւականի Օգոստոսի 23-ին, Կատերինա պտտահողմի հետեւանքով, համարեա հողին հաւասարուեց ԱՄՆ-ի Նիւ Օրլէան նահանգը:

2000-ականները նաեւ զանազան համաճարակների տարիներ էին՝ սկսած «կովի կատաղութիւն» կոչուած հիւանդութիւնից մինչեւ թռչնագրիպ ու խոզագրիպ: Վերջինս դեռ շարունակում է զոհեր խլել ողջ աշխարհում:■

Մի քայլ եւս դէպի Հրատ

Ձախողութիւնների մոխրից ծնուած «Փիւնիկ»-ը

2008 թւականի Մայիսի 26-ին, Հրատը (Մարս մոլորակը) հիւրընկալեց երկրագնդի վերջին դեսպանին: «Փիւնիկ»-ի ռոբոտային զարգացած լաբորատորիան, երկուշաբթի, վաղ առաւօտեան, ժամը 4:26-ին յաջողութեամբ վայրէջք կատարեց նախատեսուած վայրում եւ այդ հետաքրքիր տեսարանից առաջին պատկերներն ուղարկեց երկիր մոլորակ: Այս պեղումները կատարող տիեզերանաւը երկրագնդի ու Հրատի 700 միլիոն կիլոմետրանոց հեռաւորութիւնը 10 ամսւայ ընթացքում կտրեց եւ յաջողութեամբ ու անվթար հասաւ նպատակակէտին: «Փիւնիկ»-ի վայրէջքը Հրատի վրայ մեծապէս յուզել է տիեզերանաւորդութեան սիրահարներին, որոնք դեռ անհամբեր սպասում են նորանոր լուրեր ստանալ այդ մոլորակից: Նշելի է, որ «Փիւնիկ»-ը պեղումներ կատարող վեցերորդ տիեզերանաւն է, որն անխափան վայրէջք է կատարել Հրատի վրայ:■

«Գուգլ»-ի եւ «իւ Թիւբ»-ի ժամանակաշրջան

Նոր աշխարհ

2000-ականներին շարունակւել է ինտերնետի (յատկապէս ADSL-ի), բջջային հեռախօսի, արբանեակային հեռուստատեսութեան, HD հեռուստացոյցի տարածումը, իսկ ի մէյլը, լափթօփը, բլութութը, դարձել են առօրեայ կեանքի սովորական երեւոյթներ: Մի տասնամեակ սրանից առաջ ո՞վ գիտէր, թէ ինչ է Գուգլը, վեբլոգը, Իւ Թիւբը, կամ ֆէյսբուքը:■

ՄՇԱԿՈՅԹ 2009

ՀԻՆ ՈՒ ԲԱՐԻ ՌՈՔԸ ՈՒ ՆՈՐ ՓԱՌԱՏՈՆԵՐԸ



Հայաստանի մշակութային կեանքում 2009 թւականը կը յիշւի Երեւան այցելած համաշխարհային ճանաչում ձեռք բերած ռոք խմբերի աննախադէպ թւով եւ Հայաստանի փառատօնային տօնախմբութեամբ: Ի դէպ, ասենք, որ այս դէպքում «աննախադէպը» ընդամենը 3 խումբ էր: Սակայն, սա դեռ սկիզբն է:

Տարին սկսւեց բրիտանական լեգենդար ռոք խըմբի՝ «Ջեթրօ Թալ»-ի մայիսեան այցելութեամբ, Հոկտեմբերին 4000-ից աւելի հանդիսատեսի առաջ համերգ տւեց 40 տարւայ պատմութիւն ունեցող համաշխարհային բրիտանական մէկ այլ լեգենդար խումբ՝ «Իւրայա Հիփ»-ը:

Նոյն ամսին «Հայաստանը շնորհակալ է ռոքին» նախագծի շրջանակներում ռոքի սիրահարներն առիթ ունեցան տեսնելու «Դիփ Փարփլ» խմբի մեներգիչ Եան Գիլանին ու «Բլեք Սաբաթ» խմբի կիթառահար Թոնի Այոմիին, որոնք եկել էին ՀՀ կառավարութեան կողմից «Պատւոյ շքանշան» ստանալու՝ տարիներ առաջ Սպիտակի աղէտի գօտուն օգնելու համար: Նրանք միայն շքանշան են ստացել:

Իսկ տարին աւարտւեց արդէն 2010 թ. նախատեսւող խոշոր ռոք ծրագրի հաստատումով՝ Մայիսի 25-ին Հայաստանում համերգ է տալու «Դիփ Փարփլ» խումբն իր ամբողջ կազմով՝ ռոքային հրավառութիւն կազմակերպելով երկրպագուների համար:

2009 թ. մշակութային տարին ռոքային էր նաեւ սփիւռքահայութեան համար. «System of a Down» խմբի մենակատար Սերժ Թանկեանն այս տարի առաջին անգամ մասնակցեց Լոս Անջելեսի ամենամեայ հայկական երաժշտութեան մրցանակաբաշխութեանը:

Մշակութային տարին վերահաստատեց նաեւ նախորդ տարիների կոչումներից մէկը՝ փառատօնային լինելը: Յուլիսից մինչեւ աշնան վերջը մօտ 30 փառատօն անցկացւեց («Հայֆեստ», «Բաց երաժշտութիւն» փառատօն, «Ռէանիմանիա» անիմացիոն ֆիլմերի միջազգային փառատօն, Շեքսպիրեան միջազգային փառատօն, «Արեւորդի» բնապահպանական փառատօն եւ այլն):

Այս փառատօների շարքում նորութիւն էր «Բաց երաժշտութիւն» փառատօնը, քանի որ առաջին անգամ էր բացօթեայ փառատօն անցկացւում՝ 150-ից աւելի մասնակիցներով «Մոսկւա» կինօթատրոնի 800-տեղանոց ամառային բացօթեայ դահլիճում:

«Սա առաջին փառատօնն էր, որ արւեստագէտների համար ստեղծեց լուրջ, առողջ ֆորում, որը բացակայում էր մեր իրականութեան մէջ»,- կարծում է փառատօնի հեղինակ, Հայաստանի ազգային կամերային նւագախմբի գեղարւեստական ղեկավար եւ գլխաւոր դիրիժոր Արամ Ղարաբէկեանը:

Մայէստրոյի կարծիքով՝ փառատօնի առանձնայատկութիւններից մէկը ամենատարբեր ժանրերի՝ ջազային, դասական, աւանգարդ, ժողովրդական, իմպրովիզացիոն եւ ռոք երաժշտութիւնը միաւորելու հնարաւորութիւնն էր:

Այս ամառ եւս (արդէն 6 տարւայ պատմութիւն ունեցող) «Ոսկէ Օիրան» կինօփառատօնը «քաղցր էր». ներկայացւած էին 110 ֆիլմեր 40 երկրներից:

«Այս փառատօնը հաստատեց իր գոյութիւնը՝ մեր

կեանքը եւս մէկ անգամ մէկ շաբաթով վերածելով «կինոյի»,- «ԱրմենիաՆաուին» ասաց ՀՀ մշակոյթի նախարար Յասմիկ Պօղոսեանը:

2009 թ. հայ կինեմատոգրաֆիստները նաեւ առաջին անգամ մասնակցեցին Կաննի միջազգային հեղինակաւոր փառատօնի կինօշուկային, որի ժամանակ ներկայացրին 2006-2009 թթ. նկարահանուած շուրջ 30 գեղարուեստական, կարճամետրաժ եւ անիմացիոն ֆիլմեր:

Տարին բեղմնաւոր էր նաեւ հայկական բալետի համար. տասնութ տարի դադարից յետոյ Հայաստանում բեմադրուեց աշխարհահռչակ կոմպոզիտոր Արամ Խաչատրեանի «Սպարտակ» բալետը: Այն բեմադրելու համար Հայաստան ժամանեց ռուս հանրայայտ բալետմայէստեր Իւրի Գրիգորովիչը, որի 1968 թ. «Սպարտակ» բեմադրութիւնը համարւում է աշխարհում լաւագոյններից մէկը:

«Հեշտ է, երբ տարբեր արուեստագէտներ այցելում են Հայաստան ու հեռանում: Շատ աւելի դժւար է, երբ դու խնդիր ունես ստեղծել սեփական արտադրանք, եւ այդ իմաստով «Սպարտակ»-ը համարում եմ ձեռքբերում, քանի որ նման ներկայացման բացակայութիւնը մեծ բացթողում էր մեզ համար»,- «ԱրմենիաՆաուին» ասաց Յասմիկ Պօղոսեանը:

Նախարարի հրաւէրով Հայաստանում այժմ արդէն աշխատում է ԱՄՆ-ում «Արկա» բալետի դպրոցի ղեկավար Ռուդոլֆ Խառատեանը, որը 2008 թ. բալետի թատրոնի խաղացանկը 7 տարւայ ընդմիջումից յետոյ հարստացրեց երկու ներկայացումներով՝ «Տանգօ» եւ «Վարդանանք»: Այժմ նա մտածում է Հայաստանում նոր բեմադրութիւնների մասին:

Հայաստանի արուեստասէր հասարակութիւնը երկար էր սպասում «Գաֆեսճեան» արուեստի կենտրոնի բացմանը, որի մասին յայտարարուել էր դեռ 2002 թ., ակնկալւում էր՝ 2007-ին: Այս վիթխարի նախագիծը կոչւած էր վերանորոգելու Երեւանի Կասկադը, որի վերնամասը պսակելու էր համաշխարհային չափանիշներին համապատասխանող եզակի թանգարանը՝ հիւրընկալելով բարերար Ջերարդ Գաֆեսճեանի թանկարժէք ապակեայ հաւաքածուն:

Նախագծի վերջնաժամկէտից երկու տարի անց գլխաւոր թանգարանը դեռ պատրաստ չէր, սակայն մօտ 35 մլն դոլարի ներդրման եւ «Գաֆեսճեան ընտանիք» հիմնադրամի տարիներ շարունակ գործադրած ջանքերի շնորհիւ այդ անհրապոյր եւ կիսաքայքայւած հետիոտնի սանդուղքներով ու աստիճանահարթակներով Կասկադը վերածւել է տեղաբնակների եւ զբօսաշրջիկների համար գեղատեսիլ զբօսատեղիի: Յատկապէս ուշագրաւ է համաշխարհային հռչակ վայելող քանդակագործների, ի թիւս որոնց՝ Ֆեռնանդօ Բոտեռոյի, բազմաթիւ արձաններով զարդարւած Թամանեանի պուրակը:

Եւ վերջապէս, Նոյեմբերի սկզբին բացւեց այդ համալիրի առաջին ցուցահանդէսը՝ ներկայացնելով «Լիբենսկի-Բրիխտովա. Հայաստանի համար» վերնագրւած ապակեայ ինստալէացիաների հաւաքածուն: Հաւաքածուի դիզայներն ու ինստալէացիա անողը չեխ արուեստագէտ Եարոսլաւա Բրիխտովան է, որն իր հանգուցեալ ամուսնու՝ Ստանիսլաւ Լիբենսկու հետ ստեղծած աւելի քան 100 արուեստի նմուշները տեղ են գտել Գաֆեսճեանի հաւաքածուի մէջ:

Արուեստի կենտրոնի մամուլի գրասենեակի հաղորդագրութեան համաձայն.

«Հայաստանի համար» հաւաքածուի արուեստի նմուշներից շատերը յիշեցնում են Հայաստանի աւանդական խաչքարերը, որոնք հոգեւոր խորհուրդ են հաղորդել աշխատանքներին եւ իրական կապ ստեղծել արուեստագէտների ու այն երկրի միջեւ, որով նրանք հիացած են: Իսկ Լիբենսկու եւ Բրիխտովայի կապը Հայաստանի հետ սկսւել էր դեռ 1980-ականներից, երբ արուեստագէտները ծանօթացան Հայաստանի մշակոյթին ու պատմութեանը: 1988 թ. աւերիչ երկրաշարժը խոր ազդեցութիւն թողեց արուեստագէտների վրայ, որի արդիւնքում ստեղծւեց «Քաղաքի ուրւապատկերը» (1989թ.) եռաքանդակը (տրիպտիխ)»:

«Կարծում եմ՝ Հայաստանի արուեստասէր հասարակութիւնը կը գնահատի եւ կը հասկանայ, թէ ինչ ենք արտայայտել մեր արուեստով»,- ասաց Եարոսլաւա Բրիխտովան՝ մասնակցելով կենտրոնի, ինչպէս նաեւ ինստալէացիաների հաւաքածուի բացման արարողութեանը:

Տարին եզրափակւեց խոշոր ներդրումով Ճապոնիայի կառավարութեան կողմից: Այն Հայաստանի ազգային պատկերասրահին կը յատկացնի 27, 900, 000 (306 590 դոլար) ճապոնական իենի չափով տեխնիկական սարքաւորումներ, որոնք կը նպաստեն այդ հաստատութեան տեխնիկական յագեցւածութեանը, մասնաւորապէս՝ արդիական սարքաւորումներով եւ մեթոդներով պահպանման որակի բարձրացմանը: Արդիւնքում՝ գեղանկարները կը վերականգնւեն եւ փայտէ նմուշների վերականգնման արուեստանոցի համար անհրաժեշտ սարքաւորումներ ձեռք կը բերւեն:

Նշենք, որ ՀՀ մշակոյթի նախարարութեան բիւջէն 2008 թ. 7 մլրդ 125 մլն 562 հազար 500 դրամ էր (18 մլն 500 000 դոլար), իսկ 2009 թ.՝ 8 մլրդ 208 մլն 827 հազար 600 դրամ (21 մլն 300, 000 դոլար):

Աղբիւր՝ «Արմենիանաու» կայք
www.armenianow.com

Արդեօք Սրբազան Հայրը ԻՍԿԱՊԷՍ ՀԱՒԱՏԱԾԱ՞Ծ Է, ՈՐ «ԳԱՂԱՓԱՐԱԿԱՆ ՉԱՆԱՉԱՆՈՒԹԻՒՆԸ ՄԵՐ ԳԱՂՈՒԹԻ ՀԱՐՍՏՈՒԹԻՒՆՆ Է»



Վարդան Հախվերդեան

Փողոցն անցնելիս աչքիս է ընկնում մի գունաւոր պատկեր Սրբազան Հօրից, որի վրայ գրուած էր մի հետաքրքիր նախադասութիւն՝ «Գաղափարական զանազանութիւնը մեր գաղութի հարստութիւնն է»:

Նախ մտածեցի, որ երեւի նոր տարւայ օրացոյցն է,բայց ուշադիր նայելով, նկատեցի, որ «Յոյս» երկշաբաթաթերթի նոր համարն է, եւ դա աւելի շատ հետաքրքրեց ինձ:

Նախ, որ իմ կածիքով պարոն Ռոբերթ Սաֆարեանը,որպէս խըմբագիր կողմնապահութիւն է արել, իբր թէ Սրբազան Հայրը, որն ի պաշտօնէ նախագահն է Պատգամաւորական ժողովի, Թեմական խորհրդի եւ մեր գաղութի, իսկապէս տեղեակ չէ, թէ ինչ է կատարւում: Սակայն Սրբազան Հայրը, ցաւօք սրտի, բացի այն որ այդպէս չի եղել, այլ ճիշտ հակառակ դիրքորոշում է ունեցել տարբեր գաղափարականների, անգամ հայկական միութիւնների ու Պ.Ժ.-ի պատգամաւորաների հանդէպ: Թէկուզ յիշուած նախադասութիւնը տեղի վրայ շատ արժէքաւոր է, բայց այդ նկարի վրայ շատ տարօրինակ է, եւ կարող է այն թիւրիմացութիւնն առաջացնել, որ իսկապէս Սրբազան Հօր գործունէութիւնն էլ, երեւի, իրօք այդպէս է եղել, կամ գոնէ երկշաբաթաթերթի տեսակէտով այդպէս է:

Միւս կողմից, հակառակ այն շշուկներին, որ Սրբազան Հօրից, ամէն մարդ, որ խնդիր ունենայ, կարող է ժամ վերցնել եւ իր խընդիրները փոխանցել, դժբախտաբար ճիշտ չէ, քանի որ անձամբ ուզել եմ հանդիպել Սրբազան Հօրը եւ խօսել իր ղեկավարած մարմինների մասին, որոնք իրենց սխալ եւ անխոհեմ մօտեցումով դժւարութիւն են առաջացրել իրենց դիմողների համար, բայց քանի որ նախապէս նամակներ էի գրել իրենց եւ պատասխան չստանալու պատճառով էի ուզում մօտից հանդիպել, թոյլ չէին տալիս. նրանք հաւատացած էին, որ այդ անձանց փողոցից չէին գտել եւ նրանք ժամ են վատնում, առանց այն, որ նկատի ունենային, որ այդ ժամ վատնելը դրական է թէ՞ բացասական:

13-րդ Պատգամաւորական ժողովում, երբ պրն. Ռուբիկ Կարապետեանը «Րաֆֆի» միութեան ազգային պատկանելութիւնը հարցականի տակ էր տանում եւ ամենայն համարձակութեամբ ու անամօթութեամբ անդամներին անարգում, Սրբազան Հայրն իբրեւ ժողովի նախագահ, ոչ միայն չբողոքեց, եւ չպաշտպանեց այդ հայկական միութեանն ու նրա անադամներին, այլ՝ լռելով, հաստատեց նրան: Իսկ 14-րդ Պատգամաւորական ժողովի բացման ժամանակ, Սրբազան Հայրը շեշտեց, որ այդ շրջանը պէտք է լինի քրիստոնէական դաստիարակութեան եւ պատասխանատուութեան նաեւ պահանջատիրութեան շրջան, բայց դժբախտաբար դեռ շատ չէր անցել, որ, երբ որոշ պատգամաւորներ չքւէարկեցին Թեմական Խորհրդի նախընտրուած անդամներին, ատենապետ պրն.Գէորգ Աբուլեանը համարձակւեց այդ ինը պատգամաւորներին, որոնց իրաւունքն էր՝ քւէարկութեան մասնակցել թէ ոչ, խայտառակիչ անւանել, առանց նկատի ունենալու, որ նրանք քանի-քանի հազար մեր հայրենակիցների պատգամաւորներն են, եւ դա անարգանք էր մեր համայնքին: Եւ նորից Սրբազան Հայրն իր լռութեամբ հաստատեց նման վերաբերմունքը:

Նաեւ անդրադառնամ դպրոցների հարցին, որն այսօր կարեւոր թեմա է:

Սրբազան Հայրը «Թումեան» դպրոցի հիմնօրհնէքի ժամանակ ձայնին յատուկ տոն տալով ասաց. «Ինը տարւայ մէջ սա 3-րդ դպրոցն է, որ վերակառուցում ենք, իսկ նրանք, ովքեր իրենց աչքերը փա-

կել են ճշմարտութեան առաջ, թող բացեն եւ տեսնեն, թէ այս համայնքը կենսունակ է»:

Հարց է առաջանում, թէ ո՞ւմ նկատի ուներ Սրբազան Հայրը, եթէ ոչ այլ գաղափարի տէր մարդկանց, յատկապէս այն անձանց, ովքեր պնդում էին, որ պէտք է առաւել խոր ուսումնասիրութեամբ ուղղել դպրոցի վերակառուցման ծրագիրը: Այս դպրոցի հիմնօրհնէքի ընթացքում խոստացան մինչեւ մէկ տարի կը կառուցւի նոր դպրոցը, սակայն մինչեւ հիմա, որ մէկ տարուց աւել է անցնում, վերանորոգւած դպրոցից միայն մի աւերակ է մնացել, եւ Աստւած գիտի, երբ պէտք է կառուցւի նոր դպրոցը, քանի որ ամէն մի մարմին ու անհատ որեւէ պատըրւակով, արդարացնում է իրեն, եւ ամէնից ցաւալին այն է, որ շուրջ 300 աշակերտուհիներ տեղափոխւել են «Նայիրի» տղայոց դպրոցի հին մասում՝ ամենանւազ հնարաւորութիւններով ու ապահովութեամբ: Կարծում եմ բոլորն էլ կը հաստատեն, որ Սրբազան Հօր այս խօսքերը որեւէ կապ չունեն ոչ՛ պատասխանատւութեան, ո՛չ քրիստոնէութեան եւ ո՛չ էլ պահանջատիրութեան հետ:

Աւարտում եմ գրութիւնս, համարելով, որ տրամաբանական մարդու համար, այսքանն արդէն շատ բան է ասում,եւ կրկընելով, որ՝ միայն լոզունգն ու խօսքը բան չի նշանակում, կարեւորը գործն է:

Azg

«ՅՈՅՍ» ՀԱՅԿԱԿԱՆ ԹԵՐԹԸ ԹԵՀՐԱՆՈՒՄ

«Կարդում եմ «Յոյս»-ը եւ երբեմն գրւած որոշ բաներում համաձայն չեմ, պարզ է, որ չեմ ակնկալում՝ ամէն մարդ գրի այնպիսի բաներ, որոնց ես համաձայն լինեմ: Իհարկէ, կան զանազան ճաշակներ, բայց մամուլը, եթէ հաւատացած է կրօնական եւ ազգային արժէքներին, դրանք պիտի փոխանցի իր ընթերցողներին, առանց անպայմանօրէն նկատի ունենալու զանազան մարդկանց ճաշակները», «Յոյս»-ի հերթական՝ 64-րդ, համարին տւած հարցազրոյցում ասել է Թեհրանի հայոց թեմի առաջնորդ Տէր Սեպուհ արքեպիսկոպոս Սարգսեանը:

Սրբազան հայրը նշել է, որ ինքը, ծանօթ լինելով հրատարակչական եւ մամուլի աշխատանքին, հասկանում է համայնքում թերթ հրատարակելու դժւարութիւնները եւ գնահատում է «Յոյս»-ի աշխատանքը՝ գրաւիչ եւ արդի թերթ հրատարակելու ուղղութեամբ:

«Յոյս»-ը հասարակական-մշակութային երկշաբաթաթերթ է, որը տարածւում է Իրանում եւ Հայաստանում, արտօնատէրն է «Իրան-Հայաստան բարեկամութեան» ընկերութեան նախագահ Լեւոն Ահարոնեանը,իսկ գլխաւոր խմբագիրն է Ռոբերտ Սաֆարեանը:

Տ.Սեպուհ արք.Սարգսեանը եւ խմբագիրը խօսել են համայնքի կրօնական ու հասարակական խնդիրներից, իսկ խմբագրի հարցին, թէ Սրբազան Հայրն ինչպէ՞ս է վերաբերւում համայնքում գոյութիւն ունեցող տարբեր գաղափարական, քաղաքական հոսանքներին եւ խմբակցութիւններին,Սրբազան Հայրը պատասխանել է. «Ես կարծում եմ, որ այս զանազանութիւնը մեր գաղութի հարստութիւնն է, որքան գաղափարական զանազանութիւնն աւելի է, դա նշանակում է նաեւ, որ գաղութի մէջ գաղափարական եռուզեռ կայ»:

Սակայն «Յոյս»-ը ոչ գաղափարախօսական, ոչ կուսակցական թերթ է, որը գրում է ինչպէս իրանահայ համայնքի, այնպէս էլ հայաստանեան հասարակական ու մշակութային անցուդարձի մասին: Խօսելով Թեհրանի «Թունեան» դպրոցի շէնքային խնդիրների մասին՝ նոյն համարում (64-րդ) թերթը զուգահեռ պատմում է Հայաստանում իրանահայ բանաստեղծ, արձակագիր, ճարտարապետ Ռուբէն Յովհաննիսեանի կիսանդրու բացման մասին, որը տեղադրւած է Վազգէն Սարգսեանի ռազմական ինստիտուտի կրթահամալիրի շէնքում:

Այս համարում թերթն ունի խմբագրի անկիւն, որտեղ խմբագիրն առաջ է քաշում իրանահայ մամուլի խնդիրները, սակայն «Յոյս»-ը չի գրում միայն համայնքային խնդիրների մասին: Կան, օրինակ, դիմանկար-ակնարկներ՝ ֆոտոլրագրող Ալեքսանդրա Աւագեանի եւ իրանցի նկարչուհի Շիրին Մելլաթգոհարիի մասին, այստեղ տպւած են երկուսի աշխատանքներից էլ: Շիրինը լուսանկարում է, յետոյ այդ լուսանկարների վրայ ջրաներկով եւ գուաշով նկարում: Գեղանկարի միջոցով լրացնում է լուսանկարը՝ իր հերոսների հոգեվիճակը կատարելապէս ներկայացնելու համար: Իսկ Ալեքսանդրա Աւագեանի լուսանկարներում հիմնականում մուսուլման կանայք են: Ալեքսանդրա Աւագեանը ծնւել է Նիու Եօրքում, ճամփորդել աշխարհով մէկ, նա ասել է. «Ես իրապէս հաւատում եմ, որ պէտք է կտրել մշակութային սահմանները, նաեւ այն ժամանակ, երբ քաղաքականութիւնը բաժանում է մեր երկրները»:

Գրականութեան բաժնում «Յոյս»-ն այս անգամ անդրադառնում է ճապոնական գրականութեանը՝ սկսած 1970-ականներից:

Անգամ ամենաանտարբեր մարդն այս թերթում իրեն հետաքրքրող մի բան կը գտնի: «Յոյս»-ն ունի գիտական, մարզական, ժամանցային էջեր, չի մոռացել նաեւ փոքրիկ ընթերցողներին՝ նրանց նւիրելով առանձին մանկական բաժին: «Յոյս»-ի ինտերնետային կայքի հասցէն է՝ www.hooys.com:

ԻՆԳԱ ՊԵՏՐՈՍՅԱՆ

Հէ՛յ դու ջահել...թեհրանահայութիւն

Շաքէ Ա. Պետրոսեան

Ւեր ընտանեկան հաւաքոյթների մասնակիցները, արդէն վաղուց, ընդամենը երեք հոգի են՝ ես, ամուսինս եւ իր եղբայրը:

Ես գաւառից եմ, նրանք բնիկ թեհրանցիներ: Ես Թեհրանի հին ընտանիքներին չեմ ճանաչում, նրանք էլ գլուխ չեն հանում մեր նահապետական գերդաստանի բազմաճիւղ տոհմածառին թառածների արիւնակցական կապերից ու խնամիական յարաբերութիւններից:

Հնարաւոր չէ մի թեհրանահայ ընտանիքի մասին խօսք լինի ու Պետիկը՝ տեգրս, մանրամասնօրէն չպատմի տիկին Հռիփսիմէների, պարոն Յակոբների, Նեկտարների ու նրանց աղջիկների, հարսների, կեսուրների, հարեւանների, զարմիկների ու... այլոց մասին, մարդիկ, որոնք ապրում են միայն ընտանեկան հին լուսանկարներում եւ հատուկենտ տարեց մարդկանց յուշերում:

Երբեմնի շէն ու շէնշող հայաշատ Թեհրանը, իր հայաբնակ բազմաթիւ թաղերով՝ Դարւազէ Ղազւին, Դարւազէ Դովլաթ, Շաղալաբադ, Հասան Աբադ ու Ազիզխան... հիմա յուշ է ու ... մշուշի միջից երբեմն առկայծում են դէմքեր ու անուններ:

Ընտանեկան մեր հերթական հաւաքոյթին խօսք գնաց հայ երգի մասին ու յանկարծ Պետիկը սկսեց երգել մի երգ, որն ես վերջերս էի շարել համակարգչով: Շուշանիկ Կիւրղինեան: Կին, որի սիրոյ եւ հայ կանանց ու նրանց ազատագրման մասին երգերը սովետական մամլիչը յաջողեց 70 տարի ճզմած պահել, լոյս ընծայելով միայն բանւորներին ու յեղափոխութեանը նւիրուած մի երկու բանաստեղծութիւն:

Շուշանիկ Կիւրղինեան, որը Արծւի լեզւով դիմում է հայ աղջկան:

ԱՐԾՒԻ ՍԷՐԸ

Ժեռ քարափին արծիւ նստաւ,
Արծիւ նստաւ ու երգեց.
Ձորի միջին աղջիկ տեսաւ-
Նշխուն տեսքէն զարնւեց:

«Հէյ, ջա՜ն աղջիկ, մարա՛լ աղջիկ.
Ափսո՜ս թռչել չգիտես,
Էդ ծմակում լռիկ-մնջիկ
Պիտի թօշնես ծաղկի պէս:

Թէ թռչէիր- իմ ժայռերին
Քեզ թագուհի կընտրէի.
Քուն գար աչքիդ՝ իմ թեւերին
Անուշ երգով կօրօրէի…

Էդ աչքերդ՝ ինձ սեւ գիշեր,
Ժպիտդ՝ վառ արեգակ,
Անծէր երկինք քեզ չէր իշխէր
Ու կը լինէր հպատակ:

Եարաբ թռչել հէ՞չ չգիտես,
Քեզ ո՞վ ծնեց առանց թեւ.
Եարաբ կեանքում հէ՞չ ուզած չես
Օդում թռչել միշտ թեթեւ…»

Էսպէս երգեց ժեռ քարափէն
Հպարտ արծիւն անգուման,
Թռաւ անցաւ սարէն, ձորէն,
Լալով բախտըն աղջկան:

Հարիւր տարի առաջ ֆեմինիզմի մասին խօսք չկար ո՛չ Արեւմուտքում, ո՛չ էլ առաւել եւս Արեւելքում, իսկ հայ կինը եւ ուրիշ կանայք, աշխարհի տարբեր ծայրերում, կնոջ (ան)բախտի համար երգեր էին գրում արծւի լեզւով…

Ես խնդրեցի Պետիկին երգել այն երգերը, որոնք 70 ու աւելի տարիներ առաջ երգւում էին թեհրանահայ ընտանիքներում, հաւաքոյթներին, հարսանիքներին, տարեդարձներին, դպրոցական ու մանկապարտէզի բեմերում: Դժւարութեամբ յիշելով, քանի որ Պետիկը հէնց այս վերջերս՝ Հոկտեմբերին, բոլորեց իր 80 տարին, երգեց մի քանի կտոր տարբեր երգեր:

Ըստ նրա, իրենց մանկական հաւաքներին, հանրածանօթ երգչուհի Շաքէ Մակարեանը իր յատուկ երգն ունէր, եւ միշտ երգում էր, երբ հրաւիրւում էր հասակակից երեխաների տարեդարձներին:

Ահա այդ երգը.-
*Մեր .....(*օրինակ՝ Յասմիկի*) տօնի օրը*
Մայրիկը թխեց կարկանդակ.
Բարձրութիւնը՝ այսքա՜ն էր,
Յածրութիւնը՝ այսքա՜ն էր:
Այսքան-այսքան բարակ էր,
Կարկանդակ… կարկանդակ…
Ու՞մ (ես) սիրում բոլորից. (Դիմում են երեխաները՝ երգողին)

- Ես սիրում եմ բոլորին,
Բայց ամէնից (շատ) Յասմիկին,
Մեր Յասմիկի տօնի օրը,
Մայիրկը թխեց կարկանդակ … եւ այլն:

Իմ պնդումներին ականայ ենթարկւելով՝ Պետիկը երգեց մի երգ, որը վերագրւում է պրոֆ. Ռուբէն Աբրահամեանին: Հեղինակը, Սայեաթ-Նովայի հանգոյն է գրել այն, որը շատ սիրւած էր թեհրանահայերի կողմից եւ երգւում էր տարբեր եղանակներով, ըստ երգիչների նախասիրութեան:

Էշխեմէդ ջունւում եմ էլի
Օրեան Բաբա Թահերի պէս,
Տասը տարի ղալամ ձեռքիս,
Ման եմ գալի շահրի պէս…

1930-50-ական թւականներին, թեհրանահայ որոշ ընտանիքներում տարածւած էր նաեւ այսպիսի մի երգ, որ յատկապէս երգւում էր Վարդավառի ու Համբարձումի եւ այլ առիթներով բացօթեայ զբօսանքների գնալիս , դէպի՝ Էւին, Խորդուն, Վանաք, Թալօ, որոնք այն ժամանակ Թեհրանի օդասուն ու զովասուն արւարձաններն էին:

Մեր պապիկը ունէր մի շուն
Նա նրան սիրեց.
Շունը կերաւ մի կտոր միս,
Նա նրան սպանեց:
Սպանածին նա թաղեց,
Քարի վրայ նա գրեց.-
«Պապիկը ունէր մի շուն

եւ այլն եւ այլն ու այսպէս փակ շղթայի պէս պտտւող երգը ձգւում էր, մի հարիւր անգամ խեղճ շանը սպանելով ու թաղելով, մինչեւ հասնում էին փիքնիքի վայրը:

Այդպէս կրկնւող բնոյթ ունեցող երգերից է Կոմիտասի մշակումով յայտնի ժողովրդական՝ «Գացէք

տեսէք, ով է կերել զէծ» երգի թեհրանահայ տարբերակը, որի գլխաւոր գործող անձինք են՝ այգին, այծը, գայլը, սուրը, ժանգը, իւղը, մուկը...

«Գնացէք տեսէք, ո՞վ է կերել այգին,
Գնացինք, տեսանք, այծն է կերել այգին,
Այծն ու այգին ,
Ձեզ Բարեկենդան,
Մեզ բարի Զատիկ:

Հերթով ներկայանում են միւսները... եւ այսպէս անվերջ...

Երեխաներն էլ, մեծերն էլ, հաւաքներում շատ էին երգում Յովհաննէս Թումանեանի «Շունն ու Կատուն», ինչ-որ վրացական կամ ռուսական եղանակով, ամէն մի տողից յետոյ վո՜ւյ-վո՜ւյ անելով...

Օրիորդ Աղաֆի, Բերսաբէի, էլպիսի եւ միւս «առաջին» մանկապարտէզներում երեխաները երգում էին.-

Պսպղում են խաղալիքներ,
Տօնածառի կատարին.
Մ՜խ, ինչ լաւն ես այ Նոր Տարի,
Ունես պէս-պէս երգեր բարի.
Երգենք, գովենք Նոր Տարի քեզ,
Որ մեզ համար բերես նւէր...

Հաւի, Ճուտիկի ու Կատուի երգը, խիստ դաստիարակչական էր, բայց մանուկների արդի հոգեբանութեան դրոյթներին հակասող. այդուհանդերձ, այս երգը մանկապարտէզից 70 տարի անց էլ երգում էր հոգելոյս Ռ.Բէնը, երբ սիրում էր կատակել՝ ըստ իր սովորութեան.-

Անհնազանդը -(երգի միջի Ճուտիկը)**,**
Միշտ կը կրէ պատիժ,
Իսկ հնազանդը կը ստանայ նւէր,
Կը կրէ շատ արագ,
Կը կրէ շատ արագ,
Կը կրէ՞ պատի՞ժ...

Այսօր էլ անհնազանդները, եւ ոչ միայն մանուկները, պատժւում են, այն էլ շատ խիստ, յատկապէս քաղաքականները...

Հայոց մանկապարտէզի սիրուած երգերից էր նաեւ «Սագիկ-մագիկը»-ը: Սկզբում սագիկին կուտ էին տալիս, յետոյ...

Երեխան վերջում, խնդրելու էր մայրիկին,
«Որ ժողվէ քո փետուրներ
Եւ ինձ համար շինէ բարձեր...:

Ի հարկէ, երբ արդէն Զատկական տօներին կերել էին խեղճ Սագիկ-մագիկին: Անխիղճներ...

Մանուկների նուրբ ականջներից հեռու, մեծերը, յատկապէս տղամարդիկ, եւ ոմն պարոն Յակոբ, շատ էին սիրում երգել, ահա այսպիսի մի երգ, որի հեղինակը անյայտ է.

« Ուր ես եկել Սալհաբադ,
Սիրուն աղջիկ էս շոգին,
Թէյրանից էկած ջէյրան ես,
Չես դիմանայ էս տաքին:

Սիրուն կուրծքդ մի ծածկիր,
Կարմիր բլուզիդ տակին,
Շարիֆաբադի շամամը,
Չի դիմանայ էս տաքին:

Եւ պատմում է Պետիկը, որ պարոն Յակոբը յատկապէս շատ էր սիրում 5-րդ տունը՝ *Հինգ՝ սիրուն կուրծքդ մի ծածկիր...*

Պետիկը իր քաղցր ձայնով շատ երգեր երգեց, սակայն մենք զանց ենք առնում եւ բաւարարւում ենք այս գողտրիկ երգի վերջին տունը յիշատակելով, որն ենթադրւում է, թէ Ռոմանոս Մելիքեանից է, իսկ տեքստի հեղինակին դեռ չենք պարզել:

Տեսայ մի թիթեռնիկ
Թեւիկը կոտրած.
Սիրտը կեանքի տենչով
Տրոփում էր սակայն,
Քանի արեւը դեռ մայր չէր մտել...

Իհարկէ թեհրանահայ ընտանիքներում տարածւած էին այլ երգեր եւս: Նիկոլ Գալանտէրեանի երգերը բոլորի շրթերին էին:

Քանի դեռ թեհրանահայութեան գոյութեան արեւը մայր չի մտել**,** եւ եթէ որեւէ բան էք յիշում անցեալից, գրի առէք, դրանք ապագայի մարդկանց պատկերացում կը տան, թէ ինչպէ՞ս էին ապրում ու երգում 2009 թւականից առաջ հայերը, Թեհրանում թէ ... այլուր...

ՀԱՅԵՐԷՆ ԳԻՐՔ ՖՈՒՏՈՒՐԻԶՄԻ 100-ԱՄԵԱԿԻ ԱՌԹԻՒ

2009-ին լրացաւ ֆուտուրիզմի կամ ապագայապաշտութեան հռչակման հարիւրամեակը: Այս առիթով ցուցահանդէսներ եւ միջոցառումներ տեղի ունեցան զանազան երկրներում, որոնցից ամենաաչքառուն էր Լոնդոնի մոդեռն արուեստների «Թէյթ» պատկերասրահում կազմակերպուած մեծ ցուցահանդէսը: Նոյն առիթով Երեւանում «Սարգիս Խաչենց» հրատարակչութեան կողմից լոյս տեսաւ ֆրանսահայ մտաւորական եւ գրող Գրիգոր Պըլտեանի «Հայկական Ֆուտուրիզմ» ծաւալուն աշխատութիւնը:Ֆուտուրիզմը իր հրռչակումից ոչ շատ անց հասաւ Պոլիս, ուր գրաւեց նաեւ հայ արուեստագէտների ուշադրութիւնը եւ նրանց մէջ գտաւ ակտիւ հետեւորդներ: Աւելի ուշ երեւան եկան նաեւ թիֆլիսեան եւ երեւանեան ֆուտուրիստական շարժումները: Այս բոլորը մանրամասն ուսումնասիրուած են Գրիգոր Պըլտեանի գրքում: Ստորեւ վերատպում ենք սոյն գրքի ներածութեան առաջին էջերը, ուր ներկայացուած է ֆուտուրիզմը ամենահամառօտ ձեւով:

ՀԱՅԿԱԿԱՆ ԱՊԱԳԱՅԱՊԱՇՏՈՒԹԻՒՆ

Գրիգոր Պըլտեան

Երբ 20 Փետրուար 1909-ին Ֆիլիպպօ Տոմմազօ Մարինետտի կը հրատարակէ իր “Ապագայապաշտութեան հանգանակը” Փարիզի “Ֆիգարօ”ի շաբաթ օրուան թիւին մէջ, ընթերցողները չեն կրնար գուշակել, որ ատիկա սկիզբն է Ի դարու ամենէն ծաւալուն շարժումներէն մէկուն: Թերթը նման հանգանակներ տպած է նախապէս. Խորհրդապաշտութեան հանգանակը, Հումանիզմի հանգանակը, եւ այլն, եւ սակայն անոնց արձագանգները մնացած են սահմանափակ շրջանակի մը մէջ: Հասարակութիւնը վարժուած է արդէն նման էջերու, որքան դղրդալից, այնքան անվաղորդայն: Մարինետտի (1876-1944), որ երկլեզու գրող է արդէն եւ ծանօթ՝ ֆրանսական գրական հոսանքներուն, օժտուած է բացառիկ յատկութեամբ մը. գաղափարները տարածել ժամանակի հաղորդակցական միջոցներու առաւելագոյն գործածութեամբ, ինչ որ ձեռնարկը կը վերածէ երբեմն իսկական գործառնութեան մը: Գիտէ մամուլ ու քննադատ ողողել իր պայթուցիկ ու յարձակողական ազդերով, յայտարարութիւններով, որոնք կ’առնեն հանգանակի ձեւ.

«Մենք կ’ուզենք քանդել թանգարանները»,

«Մռնչող ինքնաշարժ մը աւելի գեղեցիկ է քան Սամոթրակէի Յաղթանակը»,

«Մենք կը պանծացնենք յարձակողական շարժումը, ոստումը, ապտակը ու բռունցքը»:

1910-ին Մարինետտի արդէն շրջապատուած է

Լոնդոնի ցուցահանդէսի ազդագիրը

իտալացի բանաստեղծներու, նկարիչներու, արձանագործներու խումբով մը: Գեղարուեստի բոլոր կալուածներու վերաբերող հանգանակները կը յաջորդեն իրարու մինչեւ պատերազմ: Մարտունակութիւն, կռուազանութիւն, ցոյց ու խնջոյք կը մատնեն պայքարի ու բրտութեան կիրարկումի ամենակուլ ախորժակ մը, որով պատերազմը կը դառնայ պատմութեան մղիչ ուժ, եթէ չի վերածուիր մարտի կայսերապաշտ գովքին: Ամէն պարագայի՝ իսկական գործնապաշտութիւն մը կը յայտնուի ապագայապաշտութեամբ, որ գրականութիւն եւ գեղարուեստ դուրս կը հանէ սենեակներէն ու մենաստաններէն, իրարու զուգորդելով կեանք ու արուեստ, արարք, գործողութիւն եւ խօսք, հասնելու համար *կենարուեստի*, որ իր հետեւանքները պիտի ունենայ գեղարուեստական երկ հասկացողութեան վրայ:

Մարինետտի շշմեցուցիչ գործունէութիւն մը ունի 1910-էն մինչեւ 1925, որ կը կասի պահ մը եւ կը շարունակէ մինչեւ Բ Համաշխարհային պատերազմի սկիզբը:Առանձին կամ խըմբովին կը հրատարակէ գրութիւններու տպաւորիչ շարք մը, որուն ամբողջական պատկերը կարելի չէ տալ քանի մը տողով: *Ապագայապաշտութեան հանգանակ*էն ետք՝ 1911-ին լոյս կը տեսնեն *Ապագայապաշտ թատերագիրներու հանգանակը, Ապագայապաշտ նկարչութեան թեքնիք հանգանակը* (Ապրիլ



Ֆուտուրիզմի 35-ամեակի ազդագիր

1910), *Ապագայապաշտ երաժշտութեան հանգանակը* (1911), *Ապագայապաշտ գրականութեան թեքնիք հանգանակը* (Մայիս 1912), *Ապագայապաշտ ճարտարապետութեան հանգանակը* (1914), *Իտալական հպարտութեան հանգանակը* (1915), *Արագութեան բարոյակրօնական հանգանակը* (Մայիս 1916), *Ապագայապաշտ ժողովրդավարութիւն* (1919), *Տակտիլիզմի հանգանակը* (Յունուար 1921), *Մեքենական արուեստի հանգանակը* (1923), *Ապագայապաշտ լուսանկարչութեան հանգանակը* (1930), *Ապագայապաշտ խոհանոցի հանգանակը* (1930), եւ այլն: Պէտք է աւելացնել Ումբերտօ Բոչչոնիի *Ապագայապաշտ քանդակագործութեան հանգանակը* (1912), Վալանտին Դը Սէն Պուէնի *Ապագայապաշտ կնոջ հանգանակը* (1912)... Այս բոլորի կողքին կան ստեղծագործական հատորները, նկարչական ցուցահանդէսներու առթիւ



34. Կ. Յովսեփեան, «Անձի անցք», Թիֆլիս, 1916

35. Կարօ Դարբէշ, նկարը՝ Ի. Զաւարեանի



հրատարակուած ծանրածաւալ կատալոգները, թռուցիկ էջերը, նամակները, բանավէճերը, ապագայապաշտ մամուլը. Poesia (1905-1909), Lacerba (1913-1915), Il Futurismo (1922), որոնք յարատեւ ներկայութիւն կու տան ապագայապաշտութեան, որ կ'ուզէ ըլլալ նոր զգայնութիւն, նոր աշխարհահայեացք, *նորի յայտնախօսութիւն*: Նման ցանկ կարելի է կազմել նաեւ ռուսական ապագայապաշտութեան համար, աւելի բազմաբեղուն ու բազմաշերտ, ճիւղաւորուող մտածողական-ստեղծագործական բազմաթիւ խումբերու, խմբակներու, որոնք կ'երկարաձգուին 1910-էն մինչեւ 1924: Բայց նպատակս այստեղ մատենագիտութիւն հայթայթել չէ, որքան բացայայտ դարձնել շարժումին ձգտումը խնդրոյ առարկայ դարձնելու ո՛չ միայն գրականութիւնն ու գեղարուեստները, այլեւ մարդկային յարաբերութիւններն ու ընկերային ըմբռնումները:

Իտալական աւանդութեան եւ աւանդապաշտութեան դէմ ըմբոստութիւնը շատ արագ կը տարածուի դէպի Պորտուգալ, Գերմանիա, Ռուսաստան: Ծաւալման այս ալիքը կը հասնի Պոլիս: Անոր առաջին յայտնակերպումն է այն ատեն սկսնակ բանաստեղծ Հրանտ Նազարեանցի *Ֆ.Թ.Մառինէթթի եւ ապագայապաշտութիւնը* հատորը (1910): Մեկնակէտին իհարկէ եւրոպական մամուլէն հասած լուրերը, Մարինետտիի արարքները, ցրուած հանգանակները: Կարծեմ երբեք այդքան արագ կերպով միջազգային շարժում մը իր արձագանգները չէ հնչեցուցած հայ գրականութեան մէջ: Ռուսական գրականութեան ճամբով՝ ըստ երեւոյթին Պոլսէն բոլորովին անկախ կերպով ապագայապաշտութիւնը կը մտնէ Կովկաս, Թիֆլիսի հայ գրական միջավայրը, հոն ալ ոչ շատ ծանօթ գրողի մը շնորհիւ՝ Կարա Դարուիշի, որուն *Ի՞նչ է ֆութուրիզմը* գրքոյկը (1914) աւելի հեռու կ'երթայ քան Նազարեանցի ձեռնարկը, հակառակ անոր որ այս վերջինը կը ձեռնարկէ նաեւ ապագայապաշտ բանաստեղծներու քերթուածներու թարգմանութեան ու ներկայացման: Կարա Դարուիշի գործունէութիւնը կը հետեւի ապագայապաշտ աղմկարար գործելակերպին, հասարակութեան հետ բանավէճ բացող, քարացած մտքերը խախտելու, «ճահճացած» կեանքը սարսելու քիչ մը կռուազան, բռունցքն ու կռիւը բացառած: Անկէ անդին՝ ապագայապաշտութիւնը կը միանայ Ռուսական յեղափոխութեան, իւրայատուկ ձեւ կը գտնէ Երեքի յայտարարութեան մէջ (1922), ապա՝ կը կերպարանափոխուի Նոր-Երեքի «Ստանդարտ»ի կառուցողապաշտ-կոնստրուկտիւիզմին (1924): Այս հանդէսին ծնունդը նոյն ատեն ապագայապաշտութեան ու նորարար արուեստներու պաշտօնական խափանումն է:



31. "Արեւելքը իրրեւ ապրիլ նոր գեղարուեստի եւ ստեղծագործութեան դաստիարակ թեան դրամպղը, Թիֆլիս, 1916

32. Ն. Կուլբին. Մաթիեսեւտի գիմանկարը. Մոսկուա, 1914

33. Կ. Ռուսաթեան, անվերնագիր քերթուած, Թիֆլիս, 1917 (Կարա Դարուիշի ֆոնդ, ԳԱԹ)

Նորերս «Հայոց ցեղասպանքուեան թանգարան»-ի լուսանկարների արխիւը հարստացել է Սողոմոն Թեհլիրեանի մի շարք ընտանեկան լուսանկարներով, որոնք թանգարանին է նուիրել Լեւոն Ա. Սարեանը: Թեհլիրեանը ծնուել է 1896 թւականին էրզրումի Վարի Բագառիճ գիւղում: Նրա ընտանիքը զոհ գնացին հայկական ցեղասպանութեանը, իսկ ինքը միացաւ կամաւորական խմբերին եւ մասնակցեց թուրք բանակի դէմ մի շարք կռիւների: 1921 թւականին նա մասնակցեց «Նեմեսիս» կոչուած խմբի աշխատանքներին, որի նպատակն էր ահաբեկել ցեղասպանութիւնը կազմակերպող հիմնական դէմքերին: Նա 1921-ի Մարտի 15-ին Բեռլինի Հայդընբերգ փողոցում սպանեց Թալէաթ փաշային, որը համարւում է հայերի ցեղասպանութեան թիւ մէկ կազմակերպողը:

Հետեւեալ գրութիւնը առնուած է նրա «Վերյիշումներ»-ից, որը գրի է առել Վահան Մինախորեանը:

ՍՈՂՈՄՈՆ ԹԵՀԼԻՐԵԱՆԸ ՆԿԱՐԱԳՐՈՒՄ Է ԹԱԼԷԱԹԻ ՍՊԱՆՈՒԹԻՒՆԸ

....

Առաւօտը սովորականից շուտ ելայ. արեւի շողերը արդէն հասել էին դիմացի շէնքի պատուհանին: Հազիւ էի աւարտել թէյս եւ ուզում էի բազկաթոռը մօտեցնել պատուհանի եզրին, երբ յանկարծ դիմացի շէնքի պատշգամում տեսայ Թալէաթին: Քարացայ. նա՞ էր արդեօք: Այո՛ ...

Նա մէկ երկու քայլ առաջ անցաւ, ուշադիր զննեց մայթը՝ նախ վեր, ապա վար ու կարծես ինչ մտքերի ծանրութեան տակ գլուխը կախեց: Ըստ երեւոյթին թեթեւ չէր կեանքը, գործած անապատում ոճիրից յետոյ: Յամենայն դէպս, անցել էր հինգ-վեց տարի, բայց վախը անբաժան էր մնացել նրանից: Իր լայն ուսերին կրում էր երկու հրապարակային մահավճիռներ.Պոլսոյ պատերազմական ատեանի եւ Հայ Յեղափոխական Դաշնակցութեան: Առաջինը նրա համար, հաւանաբար, ունէր բարոյական նշանակութիւն. փոխանակ վեր հանելու իր «ազգանուէր» մեծ գործը, հարազատ երկրի մէջ հարազատները դատապարտում էին նրան մահուան, իբրեւ սովորական ոճրագործի: Բայց ժամանակը կարող էր այդ «թիւրիմացութիւնը» պարզել, ապագայ սերունդները կը հասկանային կատարած գործի արժէքը, եթէ... Եթէ չլինէր Հ.Յ.Դաշնակցութեան դատավճիռը: Այնուամենայնիւ, չկարողացաւ այդ կուսակցութեան բոլոր ղեկավարներին բնաջնջել: Բայց ո՞վ մնաց իր ճանաչածներից: Փաստօրէն մէկ հոգի- Գարեգին Փաստրմաճեանը: Չէ՞ր յիշում արդեօք իր վերջին զրոյցը նրա հետ...

Լծակի պէս հաստ դաստակը վեր տարաւ, ձեռքով ճակատը շփեց, ներս մտաւ: Նայեցի ժամացոյցին. 10 էր, Ուիլանտ գնալու իր սովորական ժամը: Ձէնքը առի վրաս, պատրաստ դուրս գալու: Յանկարծ նա յայտնուեց դռան մօտ ու փղի պէս ծանրօրէն սկսեց վար իջնել: Երբ դուրս ելայ փողոց, դիմացի մայթով արդէն բռնել էր Ուիլանի ուղին: Սառը դատողութիւնը ինձ ասում էր, որ այս անգամ անկարող պիտի լինի ազատուիլ ձեռիցս, բայց եւ յուզումը բազմալեզու աղաղակներով փոթորկում էր ինձ:

-«Հասի՛ր, վազի՛ր. անցի՛ր միւս մայթը, ու շեղակի կռնակից, մէջքի՛ն, գլխի՛ն, շո՛ւտ, անցի՛ր փողոցը»...

Մայթից իջայ փողոց՝ յետեւը անցնելու համար, բայց յանկարծ մի բան յետ մղեց ինձ. հազար անգամ պարզուած բացորոշ բան այդ պահին մէկէնիմէկ կասկածելի

թուաց. նա՞ է արդեօք...

-«Անցիր դիմացը, դիմա՛ցը, դիմա՛ցը, ուղղակի ճակա՛տին, շո՛ւտ, շո՛ւտ, շո՛ւտ, վազի՛ր»...

Դիմացի մայթով հաւասարուեցի նրան, արագաքայլերով բաւական յառաջացայ. անցայ նոյն մայթը, ուսկից գնում էր նա: Յետ դարձայ: Մօտենում էինք իրար: Նա գալիս էր ճեմելու ձեւով՝ ձեռնափայտը անփոյթ ճօճելով: Մի կարճ տարածութիւն մնացած՝ զարմանալի անդորրութիւն համակեց էութիւնս: Հաւասարուելու վրայ Թալէաքը շեշտակի նայեց ինձ. աչքերի մէջ առկայծեց մահուն սարսուռը: Վերջին քայլը բեկուեց. մի քիչ թեքուեց, որ խուսափի, բայց զէնքը դուրս քաշելս ու գլխին պարպելս մէկ եղաւ...

Թալէաքը հարուածից կարծես ցընցուեց ու մի ակնթարթ հզօր մարմինը պրկուեց ձիգ, բայց երերուն. ապա՝ սղոցուած կաղնու բունի պէս երեսի վրայ տապալուեց թնդիւնով... Քիչ դէնը մի կին ճչաց ու գետին պիտի փռուի գազանը: Մի վայրկեան մղում ունեցայ բոլոր գընդակները պարպելու մէջքին, բայց փո-

խանակ կրակելու ատրճանակս նետեցի: Սեւ, թանձր արիւնը վայրկենապէս լճացաւ Թալէաթի գլխի շուրջ. կարծես ջարդուած անօթից մազուք էր դուրս թափւում...

-Մարդ սպաննե՞ց, լսեցի...

Նայեցի վեր, վար, դիմացը, ամէն կողմ մարդիկ կանգ առած՝ նայում էին ինձ...

-Մա՛րդ սպաննեց, բռնեցէ՛ք, ճչաց մէկը՝ ցանցածեւ պարզելով դէպի ինձ ձեռքերը...

Բայց լճացող արիւնը կարծես դիւթել էր ինձ:

-Բռնեցէ՛ք, բռնեցէ՛ք, ճչացին ուրիշներ...

Ես անցայ նրանց մօտով. ոչ ոք փորձեց ինձ բռնել:

Բայց, երբ թիկունքից աղաղակները բազմացան, քարացան ջղերս յանկարծ թունդ ելան, ու ես ինձ նետեցի հարեւան փողոցը, ի՞նչ անելու՝ չգիտեմ: Ահաւոր աղմուկով մարդիկ ինձ հետապնդեցին: Ես փախայ: Դիմացից եկող մէկը բռնեց ինձ...

Կարո՞ղ էի արդեօք խուսափել, հաւանաբար, եթէ այդ մասին նախապէս մտածած եւ որոշած լինէի: Անմիջապէս ամբոխը ինձ շրջապատեց: Չէի հասկանում, թէ ինչ են ուզում ինձնից. գոռում են, բռունցքները ճօճելով յարձակւում, այնինչ ես ոչ ոքի հետ գործ չունեմ: Մէկը ինձ քաշքշեց, ուրիշներ սկսան անխնայ հարուածել. մի զինուած բռունցք իջաւ գլխուս. աչքերս մթնեցին. վար ընկնելուց խուսափելով՝ չոքեցի. արիւնը ակօսում էր դէմքս. բազմաթիւ ձեռք ու ոտք էին իջնում վրաս. անզօր կատաղութեամբ պոռացի.

-Ի՞նչ էք ուզում. ես՝ հայ, նա՝ թուրք, ձե՞զ ինչ...

Յանկարծ ամբոխը ճեղքուեց. մի ոստիկան ոտքի հանեց ինձ.

-Հա՛յ են, թո՛ւրք են, խլրտում էր տեղի տուած ամբոխը:

Գլխիցս արիւն էր հոսում: Հասան ուրիշ ոստիկաններ: Ամբոխը յետ քաշուեց: Ինձ դարձրին Հարտենբերդ: Մայթի վրայ նոյն դիրքում ընկած էր հրէշը: Ոստիկաններ, բազմութիւն, որոշ հեռաւորութեան վրայ, բոլորուել են չորս կողմը:

Անցանք...

ՎԱՐԴԳԷՍ ՋԱՐԳԱՐԵԱՆԻ «ՍԱՅԵԱԹ–ՆՈՎԱՅԻ ԲԱՌ ՈՒ ԲԱՆՔ»–Ը

ՍԱՅԵԱԹ-ՆՈՎԱՅԻ ՕԳՏԱԳՈՐԾԱԾ ՊԱՐՍԿԵՐԷՆ ԲԱՌԵՐԸ

Ժ. Ալավերդեան

Թւում է չափազանցութիւն չի լինի, եթէ ասենք Սայեաթ-Նովան ամէնից շատ երգուած ու սիրուած բանաստեղծ- աշուղն է հայ ժողովրդի համար:

Ջանազան ելոյթների ու միջոցառումների ժամանակ, հասարակական ու ընկերային միջավայրերում եւ խնջոյքների ու խրախճանքների պահին դժւար թէ չարտասանւի, չհնչի նրա սրտաբուխ, հոգեհարազատ ու նրբագեղ երգն ու տաղը, քանի որ իրօք նրա դրախտային խաղն ու տաղը հէնց ուղղակի բխում է ժողովրդի ազնիւ հոգու ընդերքից եւ ապա կըրկին թանձրանում նրա սրտին:

Սայեաթ-Նովայի ստեղծագործութիւնների մասին շատ յօդւածներ ու գրքեր են գրւել եւ տակաւին շարունակւում են հանճարեղ աշուղի տաղերի ու խաղերի ուսումնասիրութիւններն ու մեկնաբանութիւնները, քանի որ, իսկապէս նրա «…գիրն ուրիշ գրէն է» եւ նա իր ստեղծագործութիւնների մէջ օգտագործել է թրքերէն, պարսկերէն, արաբերէն ու վրացերէն բառեր ու դարձւածքներ, որոնք մասամբ բացատրել ու մեկնաբանւել են առանձնակի: Դրա համար էլ թւում է, թէ դեռ սպառիչ խօսք չի ասւել նրա երկերի բովանդակութիւնը, ճշգրիտ իմաստը հասկանալու համար:

Ահա այդ նպատակին ծառայե-

լու համար էլ ընթերցողի սեղանին է դրուած «Նայիրի» հրատարակչութեան կողմից լոյս ընծայուած Վարդգէս Զարգարեանի «Սայեաթ

պարսկերէն գրականութիւնից, որոնք, ընդհանուր առմամբ, օգնում են ընթերցողին տաղանդաւոր երգչի ստեղծագործութիւննե-

սով իւրովսանը բերելու սայեաթ-նովագիտութեան գանձանակին:

Աշխատութիւնը բաղկացած է երկու մասերից: Ինչպէս ընդգծել է



ԴՈՒՆ Է՛Ն ԳԼԽԷՆ ԻՄԱՍՏՈՒՆ ԻՍ 9

Դուն է՛ն գլխէն իմաստուն իս, խիլքդ յիմարին *բաբ*[291] մի՛ անի,
հավասար
Էրազումըն տեսածի հիդ միզի մէ *հէսաբ*[292] մի՛ անի,
հաշիվ
Յիս *խօմ*[293] է՛ն գլխէն էրած իմ, նուրմէկանց *քաբաբ*[294] մի՛ անի,
հո խորովել
Թէվուր գիդիմ *բէզարիլ*[166] իս, ուրիշին *սաբաբ*[295] մի՛ անի:
ճանճրացած պատճառ

Չոկաս բիզ պէս *հուբմի*[296]-*հէքիմ*.[297] դուն *Ռօստոմի*[92/298]-Զալ՝[299] թագա՛ւոր.

-Նովայի Բառ ու Բանք» գիրքը, որը դարձեալ մի նոր ճիգ է նրա 27 տաղերում օգտագործուած օտար բառերի նշանակութիւնը պարզելու եւ մեկնութիւնը տալու ուղղութեամբ, որոնց թիւը հասնում է շուրջ 550-ի:

Ձեռնարկի բանասիրական արժէքը էապէս ներկայացրել է բանասէր-խմբագիրը (Իրանում ՀՀ լիազօր դեսպան մեծայարգ պրն. Գրիգոր Առաքելեանը) իր «երկու խօսք»-ի մէջ, որն ինքնին արժէքաւոր ու հետաքրքիր պրպըտում է, ծանրակշիռ խօսք եւ լուրջ աշխատութիւն այդ ուղղութեամբ կատարուած, որ ելնելով արեւելագիտական իր հմտութիւնից ու հարուստ կենսափորձից, որոշ օտար բառերի ու կապակցութիւնների վերաբերեալ չափազանց գեղեցիկ, շիտակ ու համոզիչ բացատրութիւններ է տալիս, կենդանի օրինակներ բերելով յատկապէս

որը նորովի ընկալելու եւ առաւել մերձենալու եւ մերւելու նրա հոգու եւ սրտի քնքուշ լարերին:

Նոյն մղումով է, անշուշտ, աշխատութիւնը կազմել հեղինակը եւ կարող է փարատել իր մտահոգութիւնն ու տարակուսանքը եւ հաւատալ, որ այժմ աւելի քան երբեւէ դիւրահաղորդ կը հնչի եւ դիւրըմբռնելի կը դառնայ աշուղի խօսքը՝ տեւել հրատարակութեան ընձեռած պատեհ առիթից օգտւելու դէպքում:

Ազարի ու պարսկերէն լեզուների իմացութիւնը եւ Սայեաթ-Նովայի ստեղծագործութիւնների նկատմամբ անյագ, անապակ ու անվերապահ սէրը ճրտգ. Վ. Զարգարեանին ոգեշնչել ու զօրավիգ է հանդիսացել յաջողելու իր պըրպըտումների մէջ, օգտագործուած օտար բառերի իմաստը, ընդհանուր առմամբ, ճշգրտօրէն ու ստուգապէս գտնելու եւ այդպիսի

յարգելի խմբագիրը, «առաջին մասում ներկայացուած են Սայեաթ-Նովայի ձայնագրուած 27 բանաստեղծութիւնները համարակալելով ու տալով իւրաքանչիւր բառի հակիրճ բացատրութիւնը»: Երկրորդ մասը կազմուած է երեք հատուածներից՝ հայերէն, պարսկերէն եւ թրքերէն տառադարձութեամբ օտար եւ բարբառային բառերի բացատրութիւնները դարձեալ համարակալուած ձեւով:

Ճիշտ է, ձեռնարկն իր տեսակում եզակի լինելով թերեւս անթերի չլինի, սակայն կատարուած ուսումնասիրութիւնը ողջունելի եւ գնահատելի է, իսկ լուրջ ընթերցողի ու Սայեաթ-Նովայի երկրպագուների համար աներկբայ, կարող է հանդիսանալ որպէս լաւագոյն աղբիւրներից մէկը՝ նրա հալալ ու զուլալ ջուրը խմելու եւ ըմբոշխնելու համար:

ՎԻԿՏՈՐ ԽԱՐԱ՝ ՎԵՐԱԾՆՈՂ ԼԵԳԵՆԴԸ

Վիկտոր Լիդիօ Խարա Մարտինեզը ծնւել է 1923-ի Սեպտեմբերի 28-ին Չիլիում, մի բազմազաւակ, աղքատ ընտանիքում: Նրա հայրը գինեմոլ էր եւ ի վերջոյ լքեց իր ընտանիքը: Խարայի մայրը որպէս հասարակ երգչուհի մեծ դեր ունէր Վիկտորի կեանքում: Նրա մայրը իր արու զաւակին քաջալերում էր դառնալ արհեստավարժ երաժիշտ: Իր մօր մահւանից յետոյ Խարան մեկնեց մի կրօնական դպրոց, բայց երկու տարի անց լքելով դպրոցը մեկնեց զինծառայութեան:

Ծառայութիւնը աւարտելուց յետոյ նա ուսանեց երաժշտական ֆակուլտետում եւ ի վերջոյ դարձաւ երաժշտագէտ:

1969-ին ձախ թեքումով կուսակցութիւնները երկրի նախագահական ընտրութիւնների համար առաջադրեցին Սալւադոր Ալենդէին: Այդ օրերին Խարան միացաւ Ալենդէի ճամբարին եւ երկրով մէկ, նրա օգտին համերգներ ունեցաւ: Բայց Ալենդէի կառավարութիւնը երկրար չտեւեց, եւ 1973-ի Սեպտեմբերի 11-ին բանակի հրամանատար Փինոշէն ԱՄՆ-ի օգնութեամբ յեղաշրջում կատարեց եւ այդ ընթացքում զոհւեց Ալենդէն ու նրա հաւատարիմ ընկերները: Նոյն օրը յեղաշրջողները ձերբակալեցին Ալենդէի աւելի քան 5000 կողմնակիցներին, եւ այդ թւում էր նաեւ Վիկտոր Խարան: Ձերբակալւածներին փոխադրեցին Սանտիագոյի “Estado de Chile” մարզահամալիր, ուր եւ երկար չարչարւեցին բոլորը:

Վկայութիւնների համաձայն, զինւորները շատ խիստ ծեծի էին ենթարկել Խարային, որի պատճառով կոտրւել էին նրա ձեռքի ու ոտքի ամբողջ ոսկորները: Նաեւ մի վկայութիւն կայ, որի համաձայն, զինւորները կացնով հատել են Խարայի ձեռքերն ու հեգնանքով ասել, թէ՝ տեսնենք հիմա ինչպէս գիտար կը նւագի: Ներկաների ասութեամբ, այդ ընթացքին Խարան սկսել է երգել “Vencermos” (Մենք կը յաղթենք) երգը եւ ամբողջ մարզահամալիրը ձայնակցել է նրան:

Այդ դէպքից յետոյ, զինւորները Խարային իրենց հետ տանելով, գնդակահարում են: Ըստ վկաների,

Խարայի մարմնում աւելի քան 30 փամփուշտ է գտնւել: Սեպտեմբերի 16-ին Խարայի գնդակահարւած մարմինը յանձնւել է իր այրուն եւ անշուք կերպով հողին յանձնւել:

Բայց եւ այնպէս Խարան մոռացութեան չմատնւեց եւ 2003-ին այն մարզահամալիրը, ուր բանտարկւած էին Խարան ու Ալենդէի կողմնակիցները, վերանւանւեց Վիկտոր Խարայի անունով:

Աղբիւր՝ Արթին Առաքելեանի վեբլոգը

Փորձիր ինքդ քեզ արդեօք ստեղծագործո՞ղ անձնաւորութիւն ես

Եթէ ուզում ես իմանալ, թէ ինչպիսի անձնաւորութիւն ես, պատասխանիր ներքեւում տրուած հարցումներին:

1 Մենութիւն սիրու՞մ ես:
ա-այո (10)
բ-ոչ (0)
գ-երբ տխուր եմ լինում (5)

2 Երազներ տեսնու՞մ ես:
ա-այո (10)
բ-ոչ (0)
գ-այո, բայց չեմ յիշում (5)

3 Լսածդ բաների մասին ինչպէ՞ս ես պատմում ուրիշներին:
ա-ճոխացրած, աւելացրած (10)
բ-ինչպէս որ լսել ես (5)
գ-աւելի համառօտ (0)

4 Կարո՞ղ ես երեւակայական որեւէ տեսարան յօրինել:
ա-այո (10)
բ-մասամբ (5)
գ-ոչ (0)

5 Ինչպիսի՞ երաժշտութիւն ես սիրում:
ա-դասական (10)
բ- էստրադային (5)
գ-մեղմ,սովորական (0)

6 Քո սենեակում գտնուող իրերը քո սիրած բանե՞րն են:
ա-այո (10)
բ-մասամբ (5)
գ-ոչ (0)

7 Սիրու՞մ ես կարդալ-գրել, թէ՞ դիտել-լսել:
ա-կարդալ, գրել (10)
բ-դիտել, լսել (5)
գ-աւելի շատ՝ խօսել (0)

8 Ինչպէ՞ս ես պատկերացնում կեանքը:
ա-վառ եւ յուսալի (10)
բ-գոհացուցիչ (5)
գ-սովորական, է՞հ (0)

9 -Ինչպիսի՞ ֆիլմեր ես սիրում դիտել:
ա-հետաքրքրական (արկածային) ու սիրային (10)
բ-ուսուցողական ու ծիծաղաշարժ (5)
գ-ոչ մէկը (0)

10 -երբ իրար շուրջ հաւաքւած զրուցում էք եւ յանկարծ բոլորը լռում են՝
ա-փորձում ես հետաքրքիր մի բան պատմել (10)
բ-որեւէ ծիծաղելի բան ես պատմում (5)
գ-սպասում ես մինչեւ մէկը խօսի (0)

Այժմ գումարիր պատասխաններից ստացած թւերը:

Եթէ գումարը կազմում է մինչեւ 15 միաւոր, ուրեմն ստեղծագործող չես եւ կեանքին նայում ես սովորական. չկայ վառ երեւակայութիւն: Թէեւ քո կեանքն էլ իր հետաքրքրութիւնն ունի, բայց կարելի է փորձել աւելի նրբանկատ եւ զգայուն լինել: Որպէսզի հետաքրքիր դառնայ կեանքը, մարդիկ իրական աշխարհում էլ ապրում են երազանքով…

15-70 միաւոր ձեռք բերելու դէպքում, կը նշանակի, թէ կեանքդ ուրախ է, կենսալի, հետաքրքիր իրադարձութիւններով: Երբեմն ստեղծագործում ես,ոգեշնչւում, գոհունակութիւն զգում:



70-100 միաւորը ցոյց է տալիս, որ իրօք սիրում ես գրել, երազել եւ ստեղծագործել: Դա կենսական է քեզ համար: Ունես պայծառ երեւակայութիւն, սիրում ես բնութիւնը, շրջապատը իր ամբողջական կոլորիտով՝ շնչաւոր եւ անշունչ առարկաներով:

ԴԷՄՔԻ ԱՆՆԱԽԸՆԹԱՅ ՎԻՐԱՀԱՏՈՒԹԻՒՆ

Ամերիկայում հրաձգութեան հետեւանքով մի կնոջ դէմքը ամբողջապէս ջախջախուել էր, բայց բացառիկ վիրահատութեան շնորհիւ այն վերականգնուեց



Միաոժամանակ առաջ Ամերիկայի Քլիվլենդ նահանգի կլինիկաներից մէկում անհաւատալի մի բան կատարուեց, եւ մի կնոջ դէմքը վիրահատութեան միջոցով պատուաստուեց անցեալում ինչ-որ դժբախտ պատահարի հետեւանքով միանգամայն վնասուած կնոջ դէմքին: Այդ կինը յայտնուեց հեռուստատեսութեան էկրանին, ինչպէս նաեւ լուսանկարչական խցիկների առջեւ՝ աշխարհին ցոյց տալու իր նոր դէմքը:

Հինգ տարի առաջ էր, որ Քանի Քալփի ամուսինը հրազէնով կրակեց նրա դէմքին, որի հետեւանքով նա բացի ճակատից ու վերին ծնօտից, համարեա կորցրեց ողջ դէմքը: Նա այս ահաւոր դէպքի պատճառով զրկուեց աչքի վերին կոպերից, քթից, ներքեւի շուրթից եւ ծնօտից:

Վնասուածքն այն աստիճանի էր, որ մինչեւիսկ անհնար էր դարձել նրա կերակրելը, իսկ դէմքն այնքան այլանդակ ու զարհուրելի էր, որ դժուար էր այդպէս ապրելը:

Նա պատմում է, թէ մի օր այդ դէպքից յետոյ մեքենայ վարելիս լսել է մի երեխայի արտայայտութիւնը, որ ասել է.«Այս հրէշին նայէք»: Այս լսելուց յետոյ, նա ինքնաշարժից իջնելով իր վարորդութեան վկայականի նկարն է ցոյց տուել նրան եւ ասել, որ նախապէս այսպէս ահաւոր չի եղել իր դէմքը:

Քանի Քալփի դէմքի պլաստիկ վիրահատութիւնը առաջինն էր ԱՄՆ-ում,իսկ իր տեսակի մէջ 4-րդն աշխարհում, որը կատարել է ամենայն յաջողութեամբ:

Օհայօ նահանգի Քլիվլենդի կլինիկայի վիրաբոյժները 11 հոգուց բաղկացած բժշկական մի

թիմի միջոցով, 22 ժամ տեւող մի գործողութեան ընթացքում, մահացած կնոջ դէմքի 80 տոկոսը պատւաստեցին Քալփի դէմքին, որից յետոյ յիշեալ կլինիկայի պլաստիկ գործողութեան հետազօտութեան վարիչ բժիշկ Մարիա Սիմոնովան տեղեկացրեց գործողութեան յաջող ընթացքի մասին, նշելով՝ «Հպարտ եմ եւ չափազանց յուզւած՝ այս լուրը հաղորդելու համար, որ մեր գործն ընթացաւ ըստ ծրագրի եւ կատարեալ յաջող կերպով, իսկ հիւանդի առողջական վիճակը լաւ է»: Այս հիւանդը դէմքը կորցնելուց յետոյ շատ վատ դրութեան մէջ էր գտնւում. երեխաները նրան տեսնելիս, սարսափում էին: Աշխարհին հանդիպելու համար դէմք է հարկաւոր: Այս կինը կորցրել էր իր մէկ աչքը, համարեա ամբողջ քիթը, վերին ծնօտը, եւ դրա համար էլ չէր կարողանում շնչել, բայց այսօր Քանի Քալփը կարողանում է խօսել, թէեւ դեռ ձայնն այնքան էլ յստակ չէ: Նա կարողանում է ժպտալ եւ կերած ուտելիքի համն զգալ: Քալփի դէմքը գեղեցիկ չէ, բայց բաւարար է սովորական կեանք վարելու համար: Նրա դէմքի մաշկի մի մասը կախւած է, սակայն բժիշկները մտադիր են պլաստիկ գործողութեամբ ձգել այն:

Քանին այժմ շատ գոհ է իր նոր դէմքից, եւ ամբողջ հոգով երախտապարտ է բոլոր նրանց, ովքեր նոր կերպարանք տւեցին իրեն:

Քլիվլենդի կլինիկայում կազմակերպւած լրատւական հաղորդ-

ման ժամանակ, երբ ուզում էին առաջին անգամ նրա դէմքը ցուցադրել մարդկանց, 46-ամեայ կինն ասաց. «Ենթադրում եմ բոլորդ եկել էք ինձ տեսնելու, բայց ես կարծում եմ, նախ՝ պէտք է անդրադառնամ այն կնոջը, որի ընտանիքը այս դէմքն ընծայեց ինձ. եթէ չլինէր այդ ևւիրումը, ես այժմ կը լինէի անդէմ»:

Մինչ այդ, Քանի Քալփի եւ նրա կորցրած դէմքի մասին ոչ ոք չգիտէր:

2004 թւականին Թովմաս Քալփը հրազէնով կրակեց կնոջ դէմքին, որից յետոյ վիրաւորեց նաեւ ինքն իրեն: Թովմասն իր կատարած յանցանքի համար 7 տարի դատապարտուեց ազատազրկութեան, իսկ կինը ստացած վէրքերի պատճառով ապրելու համար խիստ պայքար մղեց մահւան դէմ: Նա կորցրել էր աչքը, քիմքը, քիթը, այտերը, ծնօտը, եւ ջարդ ու փշուր էր եղել դէմքի ոսկորները:

Քալփը միայն կարողանում էր շնչել շնչափողում տեղադրուած խողովակի միջոցով: Երկու ամիս յետոյ պլաստիկ վիրաբոյժ Ռ. Իւհանը վերոյիշեալ կլինիկայում նրան քննելուց յետոյ ասել էր, թէ վստահ չէ, որ կարող է նրա դէմքը ֆիքսել:

Եւ այսպէս, վիրաբոյժները նրա դէմքը ֆիքսելու համար 30 վիրահատութիւն կատարեցին: Նրանք Քալփի շրթունքի մի մասը վերցնելով նրա համար այտ շինեցին, նրա ոտքի ոսկորներից օգտուելով վերին ծնօտը դրեցին. սա այն դէպքում է, որ Ռան Հայշի դէմքի մաշկի մեծ մասն էլ պատւաստեցին Քանիի դէմքին: Այսուհանդերձ, նա դեռեւս չէր կարողանում չոր կերակուրներ ուտել կամ ինքնուրոյն շնչել:

Վերջապէս Մարիա Սիմոնովայի վիրաբուժական թիմը Քլիվլենդի կլինիկայում նոր մահացած կնոջ արեան երակները, մկաններն ու մաշկը պատւաստեցին Քանի Քալփին, եւ այնուհետեւ մէկ ամիս անց նա հնարաւորութիւն ունեցաւ, վերջապէս, տարիներ յետոյ ճաշակել տարբեր տեսակի ուտելիքներ եւ զգալ պիտցայի, հաւի եւ համբուրգերի համը:

Դոկտ Սիմոնովան ասում է, թէ Քանին չափազանց սիրում է թքխուածքաբլիթով սուրճ խմել:

Քանիի դոնորի ընտանիքի մասին որեւէ տեղեկութիւն չի հաղորդւել. միայն դոկտ Սիմոնովան ասում է, թէ այս ընտանիքը Քանիի դէմքի նկարը գործողութիւնից առաջ եւ յետոյ տեսնելով սաստիկ ալեկոծւել է:

Քանի Քալփը եւս նշել է.«Երբ հանդիպում էք որեւէ մէկին, որ տգեղ արտաքին ունի, նրա մասին շուտ մի դատէք, քանի որ չգիտէք, թէ ինչ է պատահել նրա հետ: Ես հրէշ չեմ. ես մի մարդ եմ, որի վրայ անիրաւ կերպով մի մարդ հրազէնով կրակ է բացել»:

Քանի Քալփը, որ մի պենսիլւանիացի է, ուզում է նոյնպէս շարունակել իր հասարակական գործունէութիւնը: Նա ունի մի աղջիկ եւ մի տղայ, որոնք ապրում են իր մօտ: Նա ունի նաեւ երկու տղայ թոռներ:

Քանին այժմ դուրս է գրւել հիւանդանոցից, ազատ ապրում է իր տանը եւ ներկայումս միայն օրգանիզմի դիմադրողականութիւնը բարձրացնող դեղեր է ընդունում: Այսպիսի գործողութեան ծախսը 250-300 հազար դոլար է կազմում:

Այսպիսի վիրահատական գործողութիւն առաջին անգամ կատարւել է Իզաբէլ Դինւարի դէմքի վրայ: Դէմքի այսպիսի հազւադէպ վիրահատութիւն սրանից առաջ աշխարհում երեք անգամ էր տեղի ունեցել: Առաջինը 2005 թւին մի կնոջ պարագային, որի դէմքը խիստ վնասւել էր իր շան միջոցով, եւ վիրահատութիւնը կատարւել էր Ֆրանսիայում: Նման մի գործողութիւն 2006 թւականին կատարւեց Չինաստանում, երբ 30-ամեայ մի կնոջ դէմքը լուրջ վնասւածք էր ստացել արջի յարձակման հետեւանքով, եւ 2007 թւականին եւս դարձեալ Ֆրանսիայում 29-ամեայ մի տղամարդ, որի դէմքն այլանդակւել էր Նեւրոֆիբրոմա հիւանդութեան պատճառով, պատւաստման գործողութեան շնորհիւ նոր կերպարանք ստացաւ:

Այժմ թւում է, թէ այս ասպարէզում ձեռք բերած մեծ յաջողութիւնների շնորհիւ նման վիրահատական գործողութիւնների թիւը հետզհետէ կաւելանայ աշխարհում:

ՀԱՄՈՎ-ՀՈՏՈՎ ՂԱՓԱՄԱՅ

Աշնան վերջին երեւանեան շուկաներում յայտնուած դեղին դդումները ասես արեւից պոկուած փոքրիկ կտորներ լինեն:Տերեւաթափը եւ ձըմռան ցուրտ շունչն ազդարարում են, որ ժամանակն է դդումի մուրաբա եփել:

Էջմիածնաբնակ 37-ամեայ Յասմիկ Յարութիւնեանի համար դդումի «գալուստն» ազդարարում է ղափամայի սեզոնի բացումը:

«Ղափամայ պատրաստելը յատուկ արարողութիւն էր մեր ընտանիքում: Հայրս տուն էր մտնում՝ մի մեծ դդում գրկած, ու մօրս պատուիրում՝ վաղը ղափամայ ենք ուտելու:Հիմա էլ ես եմ իմ երեխաներին նոյնն ասում՝ վաղը ղափամայ ենք ուտելու»,- պատմում է նա:

Սեղանին է 3 կգ-ոց դդումը: Առանձին ափսեների մէջ նախապէս լցրել է բրինձ, մեղր, կարագ, չամիչ, սեւ սալորաչիր, ծիրանաչիր:

Յասմիկն սկսում է աշխատանքը:

Նախ՝ առանձին կաթսայի մէջ է լցնում մէկ բաժակ բրինձն ու դնում մարմանդ կրակին: Շեշտում է, որ բրինձն անպայման պէտք է առանց աղի խաշել:

Այնուհետեւ ձեռքերի մէջ դդումը խաղացնելով՝ ցոյց է տալիս վերեւի հատուածը եւ ասում, որ դդումը պէտք է գլխարկ ունենայ: Դանակով կլորաւուն կտրում է վերեւի հատուածը, դնում մի կողմ եւ անցնում բուն մասին:

«Պէտք է ձեռքդ մտցնես բացուած տեղից ներս ու լաւ մաքրես դդումի ներսի միջուկը»,- ասում է նա ու վարժ շարժումներով կողքի սկուտեղի մէջ լցնում դդումի կորիզները:

Միջուկը հանելուց յետոյ լաւանում է դդումի ներսը:

Այնուհետեւ նախապէս հալեցուած մեղրով «օծում» է

Պատրաստման համար:
1 հատ 2-3 կգ դդում,
100 գ կարագ կամ մէկ ճաշի գդալ իւղ,
200 գ չամիչ,
200 գ սալորաչիր,
200 գ ծիրանաչիր
եւ բրինձ:

դդումի ներսի պատերը: Այդ ընթացքում բրինձը եփւում է: Յասմիկը հասցնում է այն վերցնել գազօջախից: Այնուհետեւ բրնձի վրայ անպայման սառը ջուր է լցնում, որպէսզի բրնձի հատիկները ձիգ մնան: Վերջում աւելացնում է աղ:

Նա պատրաստում ու երգում է «Ղափամայ» երգը:

«Հէ՛յ, ջա՛ն, ղափամայ, համովհոտով ղափամայ...»

«Իզուր չեն էս երգը յօրինել մարդիկ, էլի, ա՛յ կուտէք, կը տեսնէք՝ ի՛նչ համով է, ի՛նչ բուրմունք ունի, ու, բացի դա, դդումը շատ օգտակար է առողջութեանը, այն էլ՝ այդքան մեղրով»,- ասում է նա:

«Մեղրը քսելուց յետոյ մի կտոր կարագ դնում ենք դդումի յատակին, յետոյ աւելացնում մի գդալ մեղր, ապա լցնում նախապէս խաշած բրինձը, որին արդէն պէտք է խառնած լինենք չամիչը: Բրնձի վրայ աւելացնում ենք սալորաչիրն ու ծիրանաչիրը,- ասում է Յասմիկը: - Յետոյ աւելացնում բրնձի միւս կէսը՝ չրերի հետ միասին: Ամենավերջում մէկ գդալ մեղր ու մի կտոր կարագ դնում վրան: Այդ ամէնը եզրափակում ենք դդումի գլխարկը դարձեալ գլխին դնելով»:

Յետոյ բրնձով ու չրերով ծանրաբեռ դդումը դրւում է 100 աստիճանի ջեռոցում: Այն եփւում է մարմանդ կրակով, գրեթէ 40 րոպէ:

Դդումի, բրնձի ու չրերի համադրութիւնը բուրմունքի մի այլ տեսակ է ստեղծում: Այն տարածւում է տնով մէկ: Խոհանոց են մտնում Յասմիկի երեխաներն ու հարցական հայեացքով ասում. «Մա՛մ, չեղա՞վ էդ ղափաման»:

40 րոպէից ղափաման պատրաստ է: Պատրաստ շարւած են նաեւ երեխաները: Սեղանի կենտրոնում բազմել է «ուրախ ղափաման»: Ժպտում է ու աչքով անում բոլորին: Յասմիկը կտրտում է: Սպիտակ գետի պէս դդումի միջից հոսում են բրինձները, յետոյ չամիչն ու չրերը:

ՖՈՐՄՈՒԼԱ 1

Աշխարհի եօթեակի չեմպիոն Միխայէլ Շումախերը որպէս Մերսեդես GP թիմի աւտոարշաւի վարորդ վերադառնում է Ֆորմուլա 1: Այս մասին հաղորդել է Sport կայքը:

Նոր տարւան՝ 2010 թւին, Շումախերը կանցկացնի իր փորձնական մրցավազքը, որի ընթացքին նա կը մրցի իր նոր թիմակիցների հետ:

Հարկ է նշել, որ 2009 թւին մոտոցիկլետից ընկնելու պատճառով ստացած վնասւածքը յետաձգեց նրա վերադարձը:

Formula 1-ի յաջորդ առաջնութիւնը մեկնարկելու է 2010 թ. Մարտի 14-ին Բահրէյնում:

ԻՐԱՆԸ ՅԱՂԹԵՑ ՍԻՆԳԱՓՈՒՐԻՆ

Իրանի ֆուտբոլի ազգային հաւաքականը, Սինգափուրին 3:1 հաշւով պարտութեան մատնելով, անցաւ Ասիայի 2010 Ազգային գաւաթի մրցակից թիմերի շարքը:

«Իռնա» գործակալութեան զեկոյցի համաձայն, Ասիայի ազգերի լիգայի նախնական փուլի 5-րդ շրջանում Իրանի ֆուտբոլի ազգային հաւաքականը Սինգափուրում այդ երկրի ազգային հաւաքականի հետ մրցամարտի դուրս եկաւ այն ժամանակ, երբ Իրանը 7 նիշով եւ Սինգափուրը 6 նիշով հանդիսանում էին վարկանշային աղիւսակի 1-ին եւ 2-րդ տեղերում, որ Իրանի թիմը այս խաղում հակառակորդին 3:1 հաշւով յաղթե-



լով եւ ընդամենը 10 նիշ ձեռք բերելով, իրաւունք ստացաւ մասնակցելու 2011 թիւն Կատարում կայանալիք Ասիայի ազգերի գաւաթի մրցութիւններին:

Մրցութեան 2 գոլերը Իրանի համար խփեցին Աղիլին եւ Մադանչին:

Խաղի 31-րդ րոպէին Սինգափուրի կապիտանը կարողացաւ անկիւնայինից փոխանցուած գընդակը գոլի վերածել, իսկ 62-րդ րոպէին Ղոլամռեզա Ռեզայիին յաջողուեց տեխնիկական հարուածով հաշիւը դարձնել 3:1: Այս խաղում փայլուն ներկայացաւ նաեւ հայազգի ֆուտբոլիստ Անդրանիկ Թէյմուրեանը:

ԱԼԻ ԴԱՅԻՆ՝ ՊԵՐՍԵՊՈԼԻՍԻ ԳԼԽԱՒՈՐ ՄԱՐԶԻՉ

«Պերսեպոլիս» ակումբի գործավար-տնօրէնը՝ նախկին գլխ. մարզիչ Քրանչարի՝ թիմի համար կատարած աշխատանքները գնահատելով, ասաց. «Ալի Դային ծանօթացնելու կարիք չունի, քանի որ նա Իրանի եւ աշխարհի ֆուտբոլի համար ճանաչուած դէմք է»:

Հաբիբ Քաշանին Ալի Դայիի հանդիսաւոր ներկայացման միջոցառման ժամանակ, ի միջիայլոց նշեց, թէ՝ «Նա աշխարհի այն հազուագիւտ ֆուտբոլիստներից է, որը մեծ պատիւների է արժանացել, եւ իրենք ուրախ են ու հպարտ, որ նա ընդունել է Պերսեպոլիս թիմի գլխաւոր մարզիչի պարտականութիւնը, վստահ լինելով, որ նա նոր աւիւն կը ներարկի թիմի երակներում»:

Ալի Դային եւս իր հերթին նշեց, թէ ինքը չէր պատրաստւում այսքան շուտ վերադառնալ ֆուտբոլ, սակայն երիտասարդներին ծառայելու տենչը եւ Պերսեպոլիսի նկատմամբ ունեցած սէրը, իրեն ստիպել է ընդունել այդ պարտականութիւնը: Նա այնուհետեւ

ընդգծեց, թէ իր բոլոր ճիգերը գործ է դնելու՝ թիմն իր իսկական տեղը գտնելու եւ այնպիսին դարձնելու, ինչպիսին երկրպագուներն են ցանկանում տեսնել նրան:

Դային Պերսեպոլիսի հետ առաջին պարապմունքը անց է կացրել Դուբայում: Նա մինչեւ պարսկական տարեվերջ պայմանագիր է ստորագրել յիշեալ ակումբի հետ, սակայն չի սիրում զանգւածային լրատւամիջոցների հետ խօսել այդ մասին: Բայց եւ այնպէս պարզւել է, որ յառաջիկայ սեզոնի համար նա կը վարձատրւի 350 միլիոն թումանով, իսկ համագործակցութիւնը շարունակւելու դէպքում կը ստանայ շուրջ 1 միլիարդ թուման:

2009 ԹՒԱԿԱՆԻ ՖՈՒՏԲՈԼԻ ԿԱՐԵՒՈՐ ԻՐԱԴԱՐՁՈՒԹԻՒՆՆԵՐԸ

«Ֆրանս 24» հեռուստաալիքը հետեւեալ կերպով ամփոփել է 2009 թւի կարեւոր իրադարձութիւնները:

-Եւրոպայի ֆուտբոլի Ոսկէ գնդակի յանձնումը Լ. Մեսիին:

-Իսպանիայի եւ միջազգային ծանրակշիռ 5 գաւաթների մըրցաշրջանում Բարսելոնայի չեմպիոն լինելը:

-Ռէալ Մադրիդ թիմի ղեկավարների միջոցով 250 միլիոն իւրոյով Քաքայի, Ք. Ռոնալդոյի, Քարիմ Բենզեմայի եւ Ժաւի Ալֆոնսոյի գնումը:

-Իւֆայի գաւաթի մրցութիւններում Ուկրաինայի Շախտար Դոնեցք թիմի առաջնութիւնը:

-Ֆրանսիայի ֆուտբոլի առաջին կարգի լիգայում Բորդոյի առաջնութիւնը:

-Ֆրանսիայի ֆուտբոլի ազգային հաւաքականի մասնակցութիւնը աշխարհի գաւաթի խաղերին եւ Թիերի Հանրիի ձեռքով ստացւած գոլի առաջացրած թնջուկը:

ԱՍԻԱՅԻ ՖՈՒՏԲՈԼԻ 10 ՄՆԱՅՈՒՆ ԴԷՄՔԵՐ

Ասիայի ֆուտբոլի կոնֆեդերացիայի ինտերնետային կայքը 2009 թւի Ասիայի լաւագոյններին ներկայացնելով, միաժամանակ ներկայացրել է վերջին տասնամեակների ֆուտբոլի մնայուն դէմքերին, որոնց մէջ աչքի է ընկնում Իրանի ֆուտբոլի հանրայայտ յարձակւող Ալի Դային:

AFC կայքը գրում է. «Համեմատելը միշտ էլ հեշտ չի ստացւում, յատկապէս, երբ ստոյգ եւ որոշակի ստանդարտներ չկան դրա համար, իսկ միւս կողմից էլ գոյութիւն ունի մեծ թւով երկրպագուների շահագրգռւածութիւնն ու մոլեռանդութիւնը»:

Մանկական

Մաթեմատիկ



Այս թերը,որ գտնըւում են ամէն մի եռանկիւնի մէջտեղում, այդ եռանկիւնու գագաթին գտնուող թերի գումարի կրկնապատիկն է:
3+9+2=14x2=28

Ամէն մի ժամացոյցի թերի գումարը հաւասար է 16-ի: Ներքեւի ժամացոյցներից «Ե» ժամացոյցն է, որի թերի գումարը 16 է:

Յունական թերում ունենք: V=5 X=10 I=1
Նաեւ այն թիւը, որ գտնւում է X-ի աջ կողմում, գումարւում է նրա հետ,հետեւաբար:
XVI= 10+5+1=16

Եթէ նոյն ուղղութեամբ գտնւող զոյգ թերը միմեանց բազմապատկենք, կը ստացւի 90 թիւը:



Ժամանց



Հանելուկներ

Արքայ չունեն, սակայն արագ
Կազմում են մեծ, ահեղ բանակ,
Հէնց մտնում են արտը հասած՝
Բերքն են հնձում առանց դանակ:
«Մորեխ»

Հսկայական փռում թխած
Մի գաթայ կայ սիրուն, գլոր,
Թխողն ինչքան ծայրից պոկում,
Նորից է նա դառնում կլոր:
«Լուսին»

Ուրախ խաղեր

Այս նկարում գտնըւում է 7 վագր:

Երրորդ հատւածն է, որ պատկանում է այս պատկերին:(տանիքի մի մասը եւ ծառի ճիւղը)

Այս շնիկը միայն կապւած է ծախ կողմի ծառին:

Պատասխանն է համար 42 :

فهرست مطالب این شماره

خبرهای جامعه ارامنه ایران		۲
جهان در دهه ۲۰۰۰	ر. ص.	۴
رویدادهای فرهنگی ارمنستان در سال ۲۰۰۹	کارینه یونسیان	۱۰
بازتاب مصاحبه هویس با اسقف اعظم ارامنه ایران	وارطان هاخوردیان	۱۲
روزنامه آزگ ارمنستان درباره هویس	اینگا پطروسیان	۱۳
ارامنه تهران: کجایی جوانی ...	شاکه پطروسیان	۱۴
صد سالگی فوتوریسم	گریگور پلتیان	۱۷
ترور طلعت پاشا از زبان سوقومون تهلیریان		۲۱
واژه‌های فارسی در شعر سایات نووا	ژ. الله‌وردیان	۲۴
ویکتور خارا، تولد دوباره یک اسطوره	آرتین آراکلیان	۲۶
خود را بیازما		۲۷
جراحی بی‌سابقه چهره		۲۸
قاپاما: خوشمزه و خوشبو		۳۱
ورزش		۳۲
سرگرمی		۳۶

دوهفته‌نامه اجتماعی فرهنگی

هویس

شماره ۶۶، ۲۳ دی ۱۳۸۸

جهان در دهه ۲۰۰۰



صاحب امتیاز و مدیر مسئول: لئون آهارونیان

دبیر تحریریه: روبرت صافاریان

شورای نویسندگان:

کارمن آذریان، لیا خاچکیان،

آندرانیک خچومیان، گارون سرکسیان، آندرانیک سیمونیان،

وانه پطروسیان، کولیا در هوانسیان

مدیرهنری: لیا خاچکیان

مسئول امور بازرگانی : آگنس آذریان

تهران، خیابان انقلاب، بین ولی عصر و فلسطین، شماره ۱۰۴۸

تلفن: ۶۶۴۹۵۱۸۰

تله-فاکس: ۶۶۴۹۵۲۰۸

hooys@inbox.com

Տնօրէն : Խաչիկ Քէշիշ

ارائه کلیه خدمات بیمه ای

Tel : 77 84 30 25 - 77 82 39 86

Fax : 77 84 30 27

آدرس : تهران ، خیابان دماوند ، ایستگاه پل مسیل

داود گلشن دوست (باختر) ، کوچه پنجم ،

پلاک ۵۴ کد پستی : ۱۶۴۵۹-۱۶۸۵۱

بیمه آسیا

کد نمایندگی : ۰۷۱۶

Իմ շատ սիրելի
ՆԱՐԲԷ ջան,
շնորհաւոր տարեդարձս

Քեզ միշտ սիրող եւ յիշող Ագնես

«ՆԱՐՄԱՔ»

قالیشوئی نارمک

Ընդունում ենք ամեն տեսակի պաստառներ,
գունավերծում, շրջանակում եւ նորոգումներ:

Մասնագետ լաւորակ գործերի լացման մէջ

Tel : 77 89 57 29 - 77 89 27 31

77 50 70 43 - 77 60 93 93

22 42 28 96 - 77 89 54 24

77 27 56 16 - 88 75 10 59

44 11 43 19 - 22 88 35 10

Mob : 0912 200 96 03

ARMENIA SIGHTSEEING

SATI

TOURS

in Armenia and Karabagh

21 Mashtots Ave., Yerevan, Armenia

Tel.: 53 11 20, 53 99 00

E-mail: sati@arminco.com

www.satiglobal.com

Ժամանց

7				4	6		1	9
		2		8		5		3
		1		3				
			5	6		7		4
	5	9	8		4	1		
	4	7			1	6	5	
9			6	5	2		8	
2					7		4	
	7	3						1

		9			5			
4		2	3					
					2		6	7
1						3	4	
		3	1		9			
5			2					
6			7					8
	7			6				
		1			4	2		

				2		3		
1		7						
					4		6	
	3				1		4	
9				4		2		8
		6	7					
5								4
		1	9		3		7	
	6			5		9		

	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15
1	ա	կ	ս	ե	լ	բ	ա	կ	ու	ն	g	■	ս	կ	ի
2	գ	ա	ր	ս	ո	ն	■	ո	ր	ս	■	ա	■	ա	լ
3	ա	ր	ա	■	կ	ա	ն	տ	■	տ	ա	ռ	ա	g	ի
4	թ	ա	մ	բ	■	կ	ա	ր	կ	ա	տ	ա	ն	ի	կ
5	ա	գ	ի	■	ա	ի	■	ե	■	օ	ա	օ	ա	ն	■
6	ն	■	տ	ե	ն	չ	ա	լ	ի	■	մ	ա	հ	■	պ
7	գ	ա	■	ա	ս	■	ր	■	ա	ն	ա	գ	■	հ	ա
8	ե	ղ	ե	ր	ա	կ	ա	ն	■	գ	ն	է	լ	■	ր
9	ղ	■	ս	■	լ	ա	տ	ւ	ի	ա	■	տ	ա	բ	ու
10	ո	տ	ի	կ	■	տ	■	ա	ր	օ	ա	■	գ	ա	հ
11	ս	ա	ր	կ	ա	ւ	ա	գ	■	ա	ր	տ	■	ր	ի
12	■	ն	■	ու	տ	ի	ճ	■	ե	ղ	ա	ն	ա	կ	■
13	թ	ե	մ	■	ա	կ	■	ա	ն	ի	ր	ա	կ	ա	ն
14	ա	լ	ե	ա	կ	■	բ	ո	լ	կ	■	ն	օ	ս	ր
15	ս	ի	ր	տ	■	մ	ու	տ	ք	■	ի	կ	ս	■	ա

Սու-Դօ-Քու

1-9 թւերը տեղադրել հորիզոնական եւ ուղղահայեաց սիւնեակներում այնպէս, որ ոչ մի թիւ չկրկնւի ոչ սիւնեակներում եւ ոչ էլ 3x3 տնակներում

Անցեալ համարի պատասխան